



Համարը
Տիպը Պայմանագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2013.10.23/17(25)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 17.09.2013

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Ժնև
Ընդունման ամսաթիվը 01.06.2000
Ստորագրման ամսաթիվը
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

(Ընդունված է Ժնևում 2000 թվականի հունիսի 1-ին)

Բովանդակության ցանկ

Հոդված

Համառոտագրված արտահայտություններ
 Ընդհանուր սկզբունքներ
 Հայտեր և արտոնագրեր, որոնց նկատմամբ կիրառվում է Պայմանագիրը
 Անվտանգության վերաբերյալ բացառություններ
 Ներկայացման ամսաթիվ
 Հայտ
 Ներկայացուցչություն
 Տեղեկատվություն, հասցեներ
 Ծանուցումներ
 Արտոնագրի վավերականությունը, չեղյալ հայտարարելը
 Ժամկետային սահմանափակումների մեղմացում
 Իրավունքների վերականգնումը գերատեսչության՝ պատշաճ միջոցներ
 ձեռնարկելը կամ կանխամտածված չլինելը բացահայտելուց հետո
 Առաջնության պահանջի ուղղում կամ լրացում, առաջնության իրավունքի
 վերականգնումը
 Կանոնակարգ
 Փարիզյան կոնվենցիայի հետ կապը
 Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրում վերանայումների,
 ուղղումների և փոփոխությունների ազդեցությունը
 Ասամբլեան
 Միջազգային բյուրո
 Վերանայումներ
 Պայմանագրի կողմ դառնալը
 Ուժի մեջ մտնելը, վավերացման և միանալու ուժի մեջ մտնելու ամսաթվերը
 Պայմանագրի կիրառումը գոյություն ունեցող հայտերի և արտոնագրերի
 նկատմամբ
 Վերապահումներ
 Պայմանագիրը չեղյալ հայտարարելը
 Պայմանագրի լեզուները
 Պայմանագրի ստորագրումը
 Ավանդապահը, գրանցումը

Յոթերորդ 1. Համառոտագրված արտահայտություններ

- Սույն Պայմանագրի նպատակների համար, եթե հստակ կերպով այլ բան նշված չէ.
- i) «գերատեսչություն» նշանակում է՝ Պայմանավորվող կողմի մարմին, որը լիազորված է արտոնագրեր տալու կամ զբաղվելու սույն Պայմանագրով կարգավորվող այլ հարցերով,
 - ii) «հայտ» նշանակում է՝ արտոնագիր ստանալու համար հայտ, ինչպես նշված է 3-րդ հոդվածում,
 - iii) «արտոնագիր» նշանակում է՝ արտոնագիր, ինչպես նշված է 3-րդ հոդվածում,
 - iv) հղումները «անձին» պետք է մեկնաբանվեն իբրև հղումներ՝ ներառելով, մասնավորապես, ֆիզիկական անձին և իրավաբանական անձին,
 - v) «տեղեկատվություն» նշանակում է՝ հայտին կամ արտոնագրին առնչվող ցանկացած դիմում կամ հարցում, հայտարարություն, փաստաթուղթ, նամակագրություն կամ այլ տեղեկություններ՝ սույն Պայմանագրով կամ դրանից դուրս որևէ գործընթացի հետ կապված, որոնք ներկայացվում են գերատեսչություն,
 - vi) «գերատեսչության փաստաթղթեր» նշանակում է՝ գերատեսչության կողմից պահվող այն տեղեկությունների հավաքածուն, որոնք վերաբերում են ներկայացված հայտերին կամ սովյալ Պայմանավորվող կողմի համար գործող, սովյալ գերատեսչության կամ այլ մարմնի կողմից տրված արտոնագրերին՝ ներառելով դրանք՝ անկախ այն միջոցներից, որոնցով սովյալ տեղեկությունները պահվում են,
 - vii) «արձանագրում» նշանակում է՝ գերատեսչության փաստաթղթերում տեղեկությունների մուտքագրման ցանկացած գործողություն,
 - viii) «հայտատու» նշանակում է՝ անձ, որին, կիրառելի օրենսդրությանը համապատասխան, գերատեսչության փաստաթղթերը նշում են որպես արտոնագրի համար դիմող անձի, կամ որպես այլ անձ, որը հայտ է ներկայացնում կամ վարում է հայտի վերաբերյալ գործերը,
 - ix) «իրավատեր» նշանակում է՝ անձ, որը գերատեսչության փաստաթղթերում նշված է որպես արտոնագրատեր,

- x) «ներկայացուցիչ» նշանակում է՝ ներկայացուցիչ՝ ըստ կիրառելի օրենսդրության,
- xi) «ստորագրություն» նշանակում է՝ ինքնության ճանաչման ցանկացած միջոց,
- xii) «գերատեսչության կողմից ընդունված լեզու» նշանակում է՝ գերատեսչության կողմից ընդունված ցանկացած լեզու՝ գերատեսչությունում համապատասխան գործընթացների համար,
- xiii) «թարգմանություն» նշանակում է՝ թարգմանություն մեկ այլ լեզվով կամ, համապատասխան դեպքերում, տառադարձություն՝ օգտագործելով գերատեսչության կողմից ընդունված այբուբենի կամ խոփոխանիշների ամբողջությունը,
- xiv) «գործընթաց գերատեսչությունում» նշանակում է՝ հայտի կամ արտոնագրի վերաբերյալ ցանկացած գործընթաց գերատեսչության վարություն,
- xv) բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստն այլ բան է մատնանշում, եզակի թվով բառերը ներառում են նաև հոգնակի թիվը և՝ հակառակը, իսկ արական սեռի անձնական դերանունները ներառում են իգական սեռը,
- xvi) «Փարիզյան կոնվենցիա» նշանակում է՝ Արդյունաբերական սեփականության պահպանության փարիզյան կոնվենցիա՝ վերանայումներով և ուղղումներով, որն ստորագրվել է 1883 թվականի մարտի 20-ին,
- xvii) «Արտոնագրային համագործակցության մասին պայմանագիր» նշանակում է՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագիր՝ վերանայումներով, ուղղումներով և փոփոխություններով, որն ստորագրվել է 1970 թվականի հունիսի 19-ին, այդ Պայմանագրով նախատեսված Կանոնակարգի և վարչական հրահանգների հետ միասին,
- xviii) «Պայմանավորվող կողմ» նշանակում է՝ ցանկացած պետություն կամ միջկառավարական կազմակերպություն, որը սույն Պայմանագրի կողմ է,
- xix) «կիրառելի օրենսդրություն» - էթե Պայմանավորվող կողմը պետություն է, նշանակում է՝ տվյալ պետության օրենսդրություն, իսկ էթե Պայմանավորվող կողմը միջկառավարական կազմակերպություն է, այն իրավական փաստաթղթերը, որոնց հիման վրա գործում է տվյալ միջկառավարական կազմակերպությունը,
- xx) «վավերացման փաստաթուղթ» պետք է մեկնաբանվի որպես ընդունման կամ հավանության մասին փաստաթղթերն ընդգրկող փաստաթուղթ,
- xxi) «Կազմակերպություն» նշանակում է՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն,
- xxii) «Միջազգային բյուրո» նշանակում է՝ Կազմակերպության Միջազգային բյուրո,
- xxiii) «Գլխավոր տնօրեն» նշանակում է՝ Կազմակերպության գլխավոր տնօրեն:

Հոդված 2. Ընդհանուր սկզբունքներ

- 1) [*Առավել բարենպաստ պահանջներ*] Պայմանավորվող կողմն ազատ է՝ սահմանելու համար այնպիսի պահանջներ, որոնք հայտատուների և արտոնագրատերերի տեսանկյունից առավել բարենպաստ են, քան այն պահանջները, որոնք նշված են սույն Պայմանագրում և Կանոնակարգում՝ բացառությամբ 5-րդ հոդվածի պահանջների:
- 2) [*Արտոնագրային նյութական իրավունքի նորմերի կանոնակարգման բացակայություն*] Ոչինչ սույն Պայմանագրում կամ Կանոնակարգում չպետք է մեկնաբանվի այնպես, որ նախատեսի Պայմանավորվող կողմի ազատության հնարավոր սահմանափակում՝ ըստ իր ցանկության սահմանել արտոնագրերի նկատմամբ կիրառելի նյութական իրավունքի պահանջներ:

Հոդված 3. Հայտեր և արտոնագրեր, որոնց նկատմամբ կիրառվում է Պայմանագիրը

- 1) [*Հայտեր*] ա) Սույն Պայմանագրի և Կանոնակարգի դրույթները կիրառվում են գյուտերի համար ազգային և տարածաշրջանային հայտերի և հավելյալ արտոնագրերի հայտերի նկատմամբ, որոնք ներկայացվում են Պայմանավորվող կողմի գերատեսչություն կամ գերատեսչության համար, և որոնք՝
 - i) հայտերի տեսակներ են, որոնք թույլատրվում է ներկայացնել՝ որպես միջազգային հայտեր՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրին համապատասխան,
 - ii) i ենթակետում նշված հայտերի տեսակների առանձնացված հայտեր են՝ գյուտերի համար արտոնագրերի կամ հավելյալ արտոնագրերի համար, ինչպես նշված է Փարիզյան կոնվենցիայի 4.է հոդվածի 1-ին կամ 2-րդ կետում:
 - բ) Հաշվի առնելով Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի դրույթները՝ սույն Պայմանագրի և Կանոնակարգի դրույթները կիրառվում են գյուտերի համար արտոնագրերի և հավելյալ արտոնագրերի միջազգային հայտերի նկատմամբ՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի համաձայն՝
 - i) Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի 22-րդ և 39-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Պայմանավորվող կողմի գերատեսչությունում կիրառելի ժամկետային սահմանափակումների նկատմամբ,
 - ii) այդ Պայմանագրի 23-րդ կամ 40-րդ հոդվածների համաձայն մեկնարկված միջազգային հայտի մշակման կամ քննարկման ամսաթիվ կամ դրանից հետո սկսված ցանկացած գործընթացի նկատմամբ:

2) [Արտոնագրեր] Սույն Պայմանագրի և Կանոնակարգի դրույթները կիրառվում են գյուտերի համար ազգային ու տարածաշրջանային հայտերի և հավելյալ արտոնագրերի համար ազգային ու տարածաշրջանային հայտերի նկատմամբ, որոնք տրվել են որևէ Պայմանավորվող կողմի համար:

Հոդված 4. Անվտանգության վերաբերյալ բացառություններ

Ոչինչ սույն Պայմանագրում և Կանոնակարգում չպետք է սահմանափակի ցանկացած Պայմանավորվող կողմի ազատությունը՝ ձեռնարկել ցանկացած գործողություն, որը կողմը կհամարի անհրաժեշտ անվտանգության կենսական շահերի պաշտպանության համար:

Հոդված 5. Ներկայացման ամսաթիվ

1) [Հայտի բաղադրիչները] ա) Եթե Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ և հաշվի առնելով 2-8-րդ պարբերությունների դրույթները՝ Պայմանավորվող կողմը պետք է ապահովի, որ հայտի ներկայացման ամսաթիվը լինի այն ամսաթիվը, որով իր գերատեսչությունն ստացել է ստորև թվարկված բոլոր բաղադրիչները՝ հայտատուի ընտրությամբ ներկայացված թղթի վրա կամ գերատեսչության կողմից թույլատրված այլ եղանակով՝ ներկայացման ամսաթվի նպատակի համար.

- i) բացահայտ կամ ենթադրյալ նշում առ այն, որ տվյալ բաղադրիչները նախատեսված են հայտ լինելու համար,
- ii) նշումներ, որոնք թույլ են տալիս որոշելու հայտատուի անձը կամ թույլ են տալիս գերատեսչությանը կապ հաստատելու հայտատուի հետ,
- iii) մաս, որն արտաքուստ հանդիսանում է նկարագիր:

բ) Պայմանավորվող կողմը ներկայացման ամսաթվի նպատակների համար կարող է ցանկացած գծագիր համարել որպես «ա» կետի iii ենթակետում նշված բաղադրիչ:

գ) Ներկայացման ամսաթվի նպատակների համար Պայմանավորվող կողմը կարող է պահանջել՝ ներկայացնել տվյալներ, որոնք թույլ են տալիս որոշելու հայտատուի անձը, ինչպես նաև՝ տվյալներ, որոնք թույլ են տալիս գերատեսչությանը կապվել հայտատուի հետ, կամ կարող է ընդունել այն փաստերը, որոնք թույլ են տալիս հաստատելու հայտատուի անձը, կամ՝ փաստեր, որոնք թույլ են տալիս գերատեսչությանը կապվելու հայտատուի հետ՝ որպես «ա» կետի ii ենթակետում նշված բաղադրիչ:

2) [Լեզու] ա) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 1-ին պարբերության «ա» կետի i և ii ենթակետերում նշված նշումները ներկայացվեն գերատեսչության համար ընդունելի լեզվով:

բ) Ներկայացման ամսաթվի նպատակների համար՝ 1-ին պարբերության «ա» կետի iii ենթակետում հիշատակվող մասը կարող է ներկայացվել ցանկացած լեզվով:

3) [Ծանուցում] Եթե հայտը չի բավարարում Պայմանավորվող կողմի՝ 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ, գերատեսչությունը գործնականում հնարավոր լինելուն պես այդ մասին ծանուցում է հայտատուին՝ հնարավորություն տալով բավարարելու ցանկացած այդպիսի պահանջ և դիտողություններ ներկայացնելու Կանոնակարգով սահմանված ժամկետի ընթացքում:

4) [Պահանջների հաջորդող բավարարում] ա) Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չեն բավարարվում ներկայացված սկզբնական հայտում, ապա, հաշվի առնելով «բ» ենթակետը և 6-րդ պարբերությունը, ներկայացման ամսաթիվը պետք է լինի այն ամսաթիվը, որով հաջորդաբար բավարարվել են Պայմանավորվող կողմի՝ կիրառելի բոլոր պահանջները՝ 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն:

բ) Պայմանավորվող կողմը կարող է նախատեսել, որ այն դեպքում, երբ «ա» ենթակետում նշված մեկ կամ մի քանի պահանջ չեն բավարարվում Կանոնակարգով սահմանված ժամկետում, հայտը պետք է համարվի չներկայացված: Եթե հայտը համարվում է չներկայացված, գերատեսչությունը այդ մասին ծանուցում է հայտատուին՝ նշելով դրա պատճառը:

5) [Նկարագրի կամ գծագրի բացակայող մասի վերաբերյալ ծանուցում] Եթե հայտի ներկայացման ամսաթիվը սահմանելիս գերատեսչությունը պարզում է, որ հայտում ենթադրաբար բացակայում է նկարագրի մասը, կամ հայտում հղում է կատարված գծագրի, որը ենթադրաբար բացակայում է հայտում, գերատեսչությունն անհապաղ այդ մասին ծանուցում է հայտատուին:

6) [Ներկայացման ամսաթիվը նկարագրի կամ գծագրի բացակայող մասը ներկայացնելու դեպքում] ա) Եթե

նկարագրի կամ գծագրի բացակայող մասը գերատեսչություն է ներկայացվում Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում, ապա նկարագրի կամ գծագրի այդ մասը ներառվում է հայտում և, հաշվի առնելով «բ» և «գ» ենթակետերը, հայտի ներկայացման ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, որով գերատեսչությունը ստացել է նկարագրի կամ գծագրի այդ մասը, կամ՝ այն ամսաթիվը, որով բավարարվել են Պայմանավորվող կողմի՝ 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն կիրառելի բոլոր պահանջները՝ կախված այն բանից, թե դրանցից որն է ավելի ուշ կատարվել:

բ) Եթե նկարագրի կամ գծագրի բացակայող մասը ներկայացվում է «ա» ենթակետի համաձայն՝ դրանց բացթողումը այն հայտում շտկելու նպատակով, որը 1-ին պարբերության «ա» ենթակետում նշված մեկ կամ մի քանի բաղադրիչները առաջին անգամ գերատեսչությունում ստանալու ամսաթիվով խնդրարկում է ավելի վաղ ներկայացված հայտի առաջնությունը, ապա ներկայացման ամսաթիվը, հայտատուի՝ Կանոնակարգով նախատեսված ժամկետում և սահմանված պահանջներին համապատասխան ներկայացված միջնորդությամբ, հանդիսանում է այն ամսաթիվը, որով բավարարվել են Պայմանավորվող կողմի կիրառելի պահանջները՝ 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն:

գ) Եթե «ա» պարբերության համաձայն ներկայացված նկարագրի բացակայող մասը կամ բացակայող գծագիրը հանվում է Պայմանավորվող կողմի սահմանած ժամկետի ընթացքում, հայտի ներկայացման ամսաթիվն է այն ամսաթիվը, որով բավարարվել են Պայմանավորվող կողմի կիրառելի պահանջները՝ 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն:

7) [*Նկարագրի ու գծագրերի փոխարինումը՝ հղում կատարելով նախապես ներկայացված հայտին*] ա) Հաշվի առնելով Կանոնակարգով նախատեսված պահանջները՝ հայտը գերատեսչության համար ընդունելի լեզվով ներկայացնելիս արված հղումը նախապես ներկայացված հայտին՝ հայտի ներկայացման ամսաթվի սահմանման նպատակների համար, պետք է փոխարինի նկարագրին ու ցանկացած գծագրի:

բ) Եթե «ա» ենթակետով նախատեսված պահանջները չեն բավարարվում, հայտը կարող է համարվել չներկայացված: Եթե հայտը համարվում է չներկայացված, գերատեսչությունը այդ մասին ծանուցում է հայտատուին՝ նշելով դրա պատճառները:

8) [*Բացառություններ*] Ոչինչ սույն հոդվածում չպետք է սահմանափակի՝

i) Փարիզյան կոնվենցիայի 4.Է հոդվածի 1-ին կամ 2-րդ ենթակետերով սահմանված հայտատուի իրավունքը՝ պահպանել որպես այդ հոդվածում նշված առանձնացված հայտի ներկայացման ամսաթիվ այդ հոդվածում նշված սկզբնական հայտի ամսաթիվը և, համապատասխան դեպքերում, առաջնության իրավունքի արտոնությունը,

ii) Պայմանավորվող կողմերի ազատությունը՝ կիրառել Կանոնակարգով նախատեսված ցանկացած հայտի նկատմամբ ցանկացած անհրաժեշտ պահանջ, որով տրամադրվում է ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման ամսաթվի արտոնությունը:

Հոդված 6. Հայտ

1) [*Հայտի ձևը կամ բովանդակությունը*] Եթե սույն Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Պայմանավորվող ոչ մի կողմ չպետք է պահանջի հայտի ձևին կամ բովանդակությանը վերաբերող ցանկացած այնպիսի այլ՝ տարբեր պայմանի բավարարում, որը լրացնում է.

i) Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրով նախատեսված միջազգային հայտերի նկատմամբ կիրառվող ձևին կամ բովանդակությանը վերաբերող պահանջները,

ii) ձևին կամ բովանդակությանը վերաբերող պահանջները, որոնց բավարարումը, Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրին համապատասխան, կարող է պահանջվել այդ պայմանագրի մասնակից ցանկացած պետության կամ վերջինիս համար գործող գերատեսչության կողմից՝ միջազգային հայտի մշակումն ու քննությունը սկսելուն պես, ինչպես նշված է այդ պայմանագրի 23-րդ կամ 40-րդ հոդվածներում,

iii) Կանոնակարգով նախատեսված ցանկացած այլ պահանջ:

2) [*Հայտի ձևանմուշ*] ա) Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է պահանջել, որ հայտի բովանդակությունը, որը համապատասխանում է Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրով սահմանված միջազգային հայտի բովանդակությանը, ներկայացվի Պայմանավորվող կողմի նախատեսած հայտի ձևանմուշով: Պայմանավորվող կողմը կարող է նաև պահանջել, որ 1-ին պարբերության ii կետով թույլատրվող կամ Կանոնակարգի 1-ին պարբերության iii կետով նախատեսված ցանկացած այլ բովանդակություն ներկայացվի հայտի այդ ձևանմուշում:

բ) Չնայած «ա» ենթակետին և հաշվի առնելով 8-րդ հոդվածի 1-ին կետը՝ Պայմանավորվող կողմը պետք է ընդունի «ա» ենթակետում նշված բովանդակության ներկայացումը Կանոնակարգով նախատեսված հայտի ձևանմուշով:

3) [Թարգմանություն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել հայտի ցանկացած մասի թարգմանությունը, որը լրացված չէ իր գերատեսչության համար ընդունելի որևէ լեզվով: Պայմանավորվող կողմը կարող է պահանջել հայտի՝ գերատեսչության համար ընդունելի լեզվով կազմված մասերի թարգմանությունը գերատեսչության համար ընդունելի ցանկացած այլ լեզվով, ինչպես նախատեսված է Կանոնակարգում:

4) [Տուրքեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել հայտերի համար տուրքերի վճարում: Պայմանավորվող կողմը կարող է կիրառել Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի՝ հայտի ներկայացման համար տուրքերի վճարմանը վերաբերող դրույթները:

5) [Առաջնության փաստաթուղթ] Եթե խնդրարկվում է ավելի վաղ ներկայացված հայտի առաջնությունը, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը և դրա թարգմանությունը, եթե ավելի վաղ ներկայացված հայտը կազմված է ոչ այն լեզվով, որն ընդունելի է գերատեսչության համար, ներկայացվեն Կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխան:

6) [Փաստեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ հայտի մշակման ընթացքում գերատեսչություն ներկայացվեն փաստեր 1-ին կամ 2-րդ պարբերություններում նշված ցանկացած հարցի վերաբերյալ կամ առաջնության մասին հայտարարության մեջ կամ 3-րդ կամ 5-րդ պարբերություններում նշված ցանկացած թարգմանության վերաբերյալ միայն այն դեպքում, եթե այդ գերատեսչությունը ողջամիտ հիմքեր ունի կասկածի տակ առնելու այդ հարցի իսկությունը կամ թարգմանության ճշտությունը:

7) [Ծանուցում] Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-6-րդ պարբերություններով սահմանված՝ կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չի բավարարվում, գերատեսչությունը ծանուցում է հայտատուին՝ հնարավորություն տալով կատարելու ցանկացած այդպիսի պահանջ և դիտողություններ ներկայացնելու Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում:

8) [Պահանջները չբավարարելը] ա) Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-6-րդ պարբերություններով սահմանված՝ կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չի բավարարվում Կանոնակարգով նախատեսված ժամկետում, Պայմանավորվող կողմը կարող է, հաշվի առնելով «բ» ենթակետը և 5-րդ ու 10-րդ հոդվածները, կիրառել այնպիսի պատժամիջոցներ, որոնք նախատեսված են իր օրենսդրությամբ:

բ) Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-ին, 5-րդ կամ 6-րդ պարբերություններով սահմանված կիրառելի ցանկացած պահանջ առաջնության խնդրարկման առնչությամբ չի բավարարվում Կանոնակարգով նախատեսված ժամկետում, առաջնության խնդրարկումը կարող է համարվել գոյություն չունեցող՝ 13-րդ հոդվածի համաձայն: 5-րդ հոդվածի 7-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն՝ որևէ այլ պատժամիջոց չի կարող կիրառվել:

Հոդված 7. Ներկայացուցչություն

1) [Ներկայացուցիչներ] ա) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ գերատեսչությունում ցանկացած գործընթացի նպատակով նշանակված ներկայացուցիչը՝

- i) իրավունք ունենա հայտերի և արտոնագրերի մասով գործեր վարելու գերատեսչության հետ՝ կիրառելի օրենսդրությանը համապատասխան,
- ii) որպես իր հասցե ներկայացնի Պայմանավորվող կողմի տրամադրած տարածքի հասցեն:

բ) Հաշվի առնելով «գ» ենթակետը՝ գերատեսչությունում ցանկացած գործընթացի վերաբերյալ որևէ գործողություն, որն իրականացվել է այն ներկայացուցչի կողմից կամ այն ներկայացուցչի առնչությամբ, որը բավարարում է Պայմանավորվող կողմի՝ «ա» ենթակետով կիրառելի պահանջները, կդիտվի որպես գործողություն, որն իրականացվել է այն հայտատուի, իրավաստիրոջ կամ շահագրգիռ այլ անձի կողմից կամ վերջիններիս առնչությամբ, որը նշանակել է այդ ներկայացուցչին:

գ) Պայմանավորվող կողմը կարող է նախատեսել, որ երդման կամ հայտարարության կամ լիազորագրի չեղյալ հայտարարման դեպքում ներկայացուցչի ստորագրությունը չունենա այն հայտատուի, իրավաստիրոջ կամ շահագրգիռ այլ անձի ստորագրության ուժը, որը նշանակել է այդ ներկայացուցչին:

2) [Պարտադիր ներկայացուցչություն] ա) Պայմանավորված կողմը կարող է պահանջել, որ հայտատուն, իրավատերը

կամ շահագրգիռ այլ անձը ներկայացուցիչ նշանակի գերատեսչությունում ցանկացած գործընթաց իրականացնելու նպատակով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտի նկատմամբ իրավահաջորդը, հայտատուն, իրավատերը կամ շահագրգիռ այլ անձը կարող են իրենք հանդես գալ գերատեսչությունում հետևյալ գործընթացների համար.

- i) հայտի ներկայացում՝ ներկայացման ամսաթվի նպատակների համար,
- ii) տուրքերի վճարում,
- iii) ցանկացած այլ գործընթաց, ինչպես նախատեսված է Կանոնակարգով,
- iv) գերատեսչության կողմից i-iii ենթակետերում նշված ցանկացած գործընթացի վերաբերյալ ստացականի կամ ծանուցման տրամադրում:

բ) Պահպանության համար տուրք կարող է վճարվել ցանկացած անձի կողմից:

3) [*Ներկայացուցիչ նշանակելը*] Պայմանավորվող կողմն ընդունում է, որ ներկայացուցչի նշանակման մասին տեղեկացվի գերատեսչություն Կանոնակարգով նախատեսված եղանակով:

4) [*Սյլ պահանջների արգելանք*] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել, որ, բացի 1-3-րդ պարբերություններում նշված պահանջներից, ձևական այլ պահանջներ ներկայացվեն այն հարցերի վերաբերյալ, որոնք կարգավորվում են այդ պարբերություններով՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են սույն Պայմանագրով կամ Կանոնակարգով:

5) [*Ծանուցում*] Պայմանավորվող կողմի՝ 1-3-րդ պարբերություններով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չկատարելու դեպքում գերատեսչությունը այդ մասին ծանուցում է հայտի նկատմամբ իրավահաջորդին, հայտատուին, իրավատիրոջը կամ շահագրգիռ այլ անձի՝ հնարավորություն տալով բավարարելու ցանկացած այդպիսի պահանջ և դիտողություններ ներկայացնելու Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում:

6) [*Պահանջներ չկատարելը*] Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-3-րդ պարբերություններով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չեն բավարարվել Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում, ապա Պայմանավորվող կողմը կարող է կիրառել այնպիսի պատժամիջոցներ, որոնք նախատեսված են իր օրենսդրությամբ:

Հոդված 8. Տեղեկատվություն, հասցեներ

1) [*Տեղեկատվության փոխանցման ձևերն ու միջոցները*] ա) Բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն հայտի ամսաթիվը հաստատելուն և 6-րդ հոդվածի 1-ին ենթակետին համապատասխան, Կանոնակարգը, «բ»-«դ» ենթակետերին համապատասխան, սահմանում է այն պահանջները, որոնք Պայմանավորվող կողմին թույլատրվում են կիրառել տեղեկատվության փոխանցման ձևերի ու միջոցների վերաբերյալ:

բ) Պայմանավորվող ոչ մի կողմ պարտավոր չէ ընդունելու թղթային տեղեկատվությունից տարբերվող այլ ձևով ներկայացված տեղեկատվություն,

գ) Պայմանավորվող ոչ մի կողմ պարտավոր չէ բացառել տեղեկատվության ներկայացումը թղթի վրա,

դ) Պայմանավորվող կողմն ընդունում է տեղեկատվության ներկայացումը թղթի վրա՝ ժամկետները պահպանելու նպատակով:

2) [*Տեղեկատվության լեզուն*] Եթե սույն Պայմանագրով կամ Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ տեղեկատվությունը ներկայացվի գերատեսչության համար ընդունելի լեզվով:

3) [*Միջազգային տիպային ձևանմուշներ*] Չնայած 1-ին պարբերության «ա» ենթակետին և հաշվի առնելով 1-ին պարբերության «բ» ենթակետը և 6-րդ հոդվածի 2-րդ պարբերության «բ» ենթակետը՝ Պայմանավորվող կողմը պետք է ընդունի տեղեկատվության բովանդակության ներկայացումը այնպիսի ձևանմուշով, որը համապատասխանում է այդպիսի տեղեկատվության վերաբերյալ Կանոնակարգով նախատեսված միջազգային տիպային ձևանմուշին, եթե այդպիսին առկա է:

4) [*Տեղեկատվության ստորագրումը*] ա) Եթե Պայմանավորվող կողմը պահանջում է ստորագրություն՝ ցանկացած տեղեկատվության նպատակով, այդ Պայմանավորվող կողմը պետք է ընդունի ցանկացած ստորագրություն, որը համապատասխանում է Կանոնակարգով սահմանված պահանջներին:

բ) Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել իր գերատեսչություն ուղարկված ցանկացած ստորագրության հաստատում, նոտարական վավերացում, նույնականացում, օրինականացում կամ այլ հավաստագրում՝ բացառությամբ ցանկացած գրեթե (quasi) դատավարությունների դեպքերի, կամ եթե դա նախատեսված է Կանոնակարգով:

գ) Հաշվի առնելով «բ» ենթակետը՝ Պայմանավորվող կողմը միայն այն դեպքում կարող է պահանջել, որ փաստեր ներկայացվեն գերատեսչություն, եթե գերատեսչությունը ցանկացած ստորագրության իսկությունը կասկածի տակ առնելու ողջամիտ հիմքեր ունի:

5) [Նշումներ տեղեկատվությունների մեջ] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ ցանկացած տեղեկատվություն պարունակի Կանոնակարգում նախատեսված մեկ կամ մի քանի նշում:

6) [Նամակագրության հասցե, իրավաբանական փաստաթղթեր հանձնելու հասցե և այլ հասցեներ] Հաշվի առնելով Կանոնակարգով նախատեսված ցանկացած դրույթ՝ Պայմանավորվող կողմը կարող է պահանջել հայտատուից, իրավատիրոջից կամ շահագրգիռ այլ անձից ցանկացած տեղեկատվության մեջ նշել՝

- i) հասցե՝ նամակագրության համար,
- ii) հասցե՝ իրավաբանական փաստաթղթերը հանձնելու համար,
- iii) ցանկացած այլ հասցե, ինչպես նախատեսված է Կանոնակարգով:

7) [Ծանուցում] Պայմանավորվող կողմի՝ տեղեկատվությունների վերաբերյալ 1-6-րդ կետերով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չբավարարելու դեպքում գերատեսչությունը ծանուցում է հայտատուին, իրավատիրոջը կամ շահագրգիռ այլ անձին՝ հնարավորություն տալով նրան բավարարելու ցանկացած այդպիսի պահանջ և դիտողություններ ներկայացնելու Կանոնակարգով նախատեսված ժամկետում:

8) [Պահանջներ չկատարելը] Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-6-րդ պարբերություններով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չեն բավարարվել Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում, ապա Պայմանավորվող կողմը կարող է, 5-րդ և 10-րդ հոդվածների և Կանոնակարգում նախատեսված այլ բացառությունների համաձայն, կիրառել այնպիսի պատժամիջոցներ, որոնք նախատեսված են իր օրենսդրությամբ:

Հոդված 9. Ծանուցումներ

1) [Բավարար ծանուցում] Սույն Պայմանագրով կամ Կանոնակարգով սահմանված ցանկացած ծանուցում, որն ուղարկվում է գերատեսչության կողմից 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության մեջ նշված նամակագրության հասցեով կամ իրավաբանական փաստաթղթեր հանձնելու համար հասցեով կամ ցանկացած այլ հասցեով, որը նախատեսված է Կանոնակարգով՝ սույն դրույթի նպատակների համար, և որը համապատասխանում է տվյալ ծանուցման նկատմամբ կիրառվող դրույթներին, հանդիսանում է բավարար ծանուցում սույն Պայմանագրի և Կանոնակարգի նպատակների համար:

2) [Եթե կապ հաստատելու համար նշումներ ներկայացված չեն եղել] Ոչինչ սույն Պայմանագրում և Կանոնակարգում չի պարտադրում Պայմանավորվող կողմին ծանուցում ուղարկել հայտատուին, իրավատիրոջը կամ շահագրգիռ այլ անձի, եթե նշումները, որոնք թույլ են տալիս կապ հաստատելու այդ հայտատուի, իրավատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի հետ, չեն ներկայացվել գերատեսչություն:

3) [Զծանուցելը] Հաշվի առնելով 10-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, եթե գերատեսչությունը չի ծանուցում հայտատուին, իրավատիրոջը կամ շահագրգիռ այլ անձի՝ սույն Պայմանագրի կամ Կանոնակարգի համաձայն ցանկացած պահանջ չբավարարելու վերաբերյալ, ծանուցման բացակայությունը չի ազատում հայտատուին, իրավատիրոջը կամ շահագրգիռ այլ անձին այդ պահանջը կատարելու պարտականությունից:

Հոդված 10. Արտոնագրի վավերականությունը, չեղյալ հայտարարելը

1) [Արտոնագրի վավերականությունը, որի վրա չի ազդում որոշ ձևական պահանջներ չկատարելը] Հայտի վերաբերյալ 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ պարբերություններում և 8-րդ հոդվածի 1-4 պարբերություններում նշված մեկ կամ մի քանի ձևական պահանջներ չկատարելը չի կարող հիմք լինել արտոնագրի լրիվ կամ մասամբ չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու համար բացառությամբ այն դեպքերի, երբ ձևական պահանջը չկատարելը խարդախ մտադրության հետևանք է:

2) [Դիտողություններ ներկայացնելու, լրացումներ կամ ուղղումներ կատարելու հնարավորությունը մտադրված չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու դեպքում] Արտոնագիրը չի կարող լրիվ կամ մասամբ չեղյալ հայտարարվել կամ անվավեր ճանաչվել՝ առանց հնարավորություն տալու իրավատիրոջը արտոնագիրը չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մտադրության կապակցությամբ դիտողություններ ներկայացնել և լրացումներ կամ ուղղումներ կատարել ողջամիտ ժամկետի ընթացքում, եթե դա թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ:

3) [Հասուկ գործընթացների վերաբերյալ պարտավորությունների բացակայություն] 1-ին և 2-րդ պարբերությունները չեն առաջացնում արտոնագրային իրավունքների կատարման համար դատական այնպիսի գործընթացներ ձեռնարկելու պարտավորություն, որոնք տարբերվում են օրենքի հարկադիր կատարման ընդհանուր գործընթացներից:

Հոդված 11. Ժամկետային սահմանափակումների մեղմացում

1) [Ժամկետների երկարաձգում] Պայմանավորվող կողմը կարող է նախատեսել Կանոնակարգով նախատեսված ժամկետով գերատեսչության կողմից սահմանված ժամկետի երկարաձգում՝ գերատեսչությունում հայտերի կամ արտոնագրերի վերաբերյալ որևէ գործընթացի գործողությունների իրականացման համար, եթե այդ մասին, Կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան, միջնորդություն է ներկայացվել գերատեսչություն, և այդ միջնորդությունը Պայմանավորվող կողմի ընտրությամբ ներկայացվել է՝

i) մինչև սահմանված ժամկետի լրանալը կամ

ii) սահմանված ժամկետը լրանալուց հետո, սակայն Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում:

2) [Հայտերի մշակման շարունակում] Եթե հայտատուն կամ իրավատերը չեն պահպանել Պայմանավորվող կողմի գերատեսչության՝ գերատեսչությունում հայտերի կամ արտոնագրերի վերաբերյալ որևէ գործընթացի գործողությունների իրականացման համար սահմանած ժամկետը, և եթե այդ Պայմանավորվող կողմը չի նախատեսում ժամկետի երկարաձգում՝ 1-ին պարբերության ii ենթակետի համաձայն, ապա Պայմանավորվող կողմը պետք է նախատեսի հայտերի կամ արտոնագրերի շարունակական մշակումը և, եթե անհրաժեշտ է, այդ հայտերի կամ արտոնագրերի վերաբերյալ հայտատուի կամ իրավատիրոջ իրավունքների վերականգնում, եթե՝

i) այդ մասին միջնորդություն է ներկայացվել գերատեսչություն՝ Կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան,

ii) միջնորդությունը ներկայացվել է, և բոլոր այն պահանջները, որոնց վերաբերյալ կիրառվում է ժամկետ համապատասխան գործողություններ կատարելու համար, կատարվել են Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում:

3) [Բացառություններ] Պայմանավորվող ոչ մի կողմից չի պահանջվում նախատեսել 1-ին կամ 2-րդ պարբերություններում նշված մեղմացումը Կանոնակարգով սահմանված բացառությունների նկատմամբ:

4) [Տուրքեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 1-ին կամ 2-րդ պարբերության համաձայն ներկայացվող միջնորդության առնչությամբ տուրքերի վճարում:

5) [Այլ պահանջների արգելանք] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել, որ կատարվեն 1-ին կամ 2-րդ պարբերությամբ նախատեսված մեղմացումների վերաբերյալ 1-4-րդ պարբերություններով նախատեսված պահանջներից բացի այլ պահանջներ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով կամ Կանոնակարգով:

6) [Դիտողություններ ներկայացնելու հնարավորությունը մերժման մտադրության դեպքում] 1-ին կամ 2-րդ պարբերությամբ ներկայացվող միջնորդությունը չի կարող մերժվել՝ առանց հայտատուին կամ իրավատիրոջը ողջամիտ ժամկետի ընթացքում մերժման մտադրության մասին դիտողություններ ներկայացնելու հնարավորություն տալու:

Հոդված 12. Իրավունքների վերականգնումը գերատեսչության՝ պատշաճ միջոցներ ձեռնարկելը կամ կանխամտածված չլինելը բացահայտելուց հետո

1) [Միջնորդություն] Պայմանավորվող կողմը պետք է ապահովի, որ եթե հայտատուն կամ իրավատերը չեն պահպանել գերատեսչությունում որևէ գործընթացի գործողություններ իրականացնելու ժամկետները, և եթե այդ ժամկետները չպահպանելը անմիջականորեն հանգեցնում է հայտի կամ արտոնագրի նկատմամբ իրավունքների կորստի, գերատեսչությունը վերականգնում է տվյալ հայտի կամ արտոնագրի նկատմամբ հայտատուի կամ իրավատիրոջ իրավունքները, եթե.

i) այդ մասին միջնորդությունը գերատեսչություն է ներկայացվել Կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան,

ii) միջնորդությունը ներկայացվել է, և բոլոր այն պահանջները, որոնց նկատմամբ կիրառվում էր ժամկետը՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար, կատարվել են Կանոնակարգով նախատեսված ժամկետի ընթացքում,

iii) միջնորդության մեջ նշված են ժամկետները չպահպանելու պատճառները, և

iv) գերատեսչությունը գտնում է, որ ժամկետները չպահպանելը տեղի է ունեցել՝ չնայած այն փաստին, որ տվյալ հանգամանքներում ձեռնարկվել են պատշաճ միջոցներ, կամ, Պայմանավորվող կողմի ընտրությամբ, որ այդպիսի ուշացումը կանխամտածված չի եղել:

2) [*Բացառություններ*] Պայմանավորվող ոչ մի կողմից չի պահանջվում ապահովել 1-ին պարբերության համաձայն իրավունքների վերականգնում Կանոնակարգով սահմանված բացառությունների նկատմամբ:

3) [*Տուրքեր*] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 1-ին պարբերության համաձայն միջնորդության առնչությամբ տուրքերի վճարում:

4) [*Փաստեր*] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 1-ին պարբերության iii ենթակետում նշված պատճառները հաստատող հայտարարությունը կամ այլ փաստեր ներկայացվեն գերատեսչություն վերջինիս կողմից սահմանված ժամկետում:

5) [*Ղիտողություններ ներկայացնելու հնարավորությունը մերժման մտադրության դեպքում*] 1-ին պարբերության համաձայն՝ միջնորդությունը չի կարող լրիվ կամ մասնակի մերժվել՝ առանց միջնորդող կողմին ողջամիտ ժամկետի ընթացքում մերժման մտադրության կապակցությամբ ղիտողություններ ներկայացնելու հնարավորություն տալու:

Հոդված 13. Առաջնության պահանջի ուղղում կամ լրացում, առաջնության իրավունքի վերականգնումը

1) [*Առաջնության պահանջի ուղղում կամ լրացում*] Եթե այլ բան նախատեսված չէ Կանոնակարգով, Պայմանավորվող կողմը պետք է հայտի վերաբերյալ առաջնության պահանջի ուղղումներ կամ լրացում կատարելու հնարավորությունն ապահովի (հաջորդող հայտ), եթե.

i) այդ մասին միջնորդություն է ներկայացվել գերատեսչություն՝ Կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան,

ii) միջնորդությունը ներկայացվել է Կանոնակարգով սահմանված ժամկետի ընթացքում, և

iii) հաջորդող հայտի ներկայացման ամսաթիվն ավելի ուշ չէ առաջնության ժամկետի լրանալու ամսաթվից՝ հաշվելով ամենավաղ ներկայացված հայտի ամսաթվից, որի հիման վրա խնդրարկվում է առաջնությունը:

2) [*Հաջորդող հայտն ուշացումով ներկայացնելը*] Հաշվի առնելով 15-րդ հոդվածը՝ Պայմանավորվող կողմը նախատեսում է, որ եթե հայտը (հաջորդող հայտը), որով խնդրարկվում կամ կարող է խնդրարկվել ավելի վաղ ներկայացված հայտի առաջնությունը, ունի ներկայացման ամսաթիվ, որն ավելի ուշ է, քան առաջնության ժամկետը լրանալու ամսաթիվը, բայց Կանոնակարգով սահմանված ժամկետի սահմաններում է, գերատեսչությունը վերականգնում է առաջնության իրավունքը, եթե.

i) այդ մասին միջնորդություն է ներկայացվել գերատեսչություն՝ Կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան,

ii) միջնորդությունը ներկայացվել է Կանոնակարգով սահմանված ժամկետի ընթացքում,

iii) միջնորդության մեջ նշված են առաջնության ժամկետը չպահպանելու պատճառները, և

iv) գերատեսչությունը գտնում է, որ հաջորդող հայտը առաջնության ժամկետի ընթացքում չներկայացնելը տեղի է ունեցել՝ չնայած այն փաստին, որ տվյալ հանգամանքներում ձեռնարկվել են պատշաճ միջոցներ, կամ, Պայմանավորվող կողմի ընտրությամբ, որ այդպիսի ուշացումը կանխամտածված չի եղել:

3) [*Ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը չներկայացնելը*] Պայմանավորվող կողմը պետք է ապահովի, որ եթե ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը, որը պահանջվում է 6-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն, չի ներկայացվել գերատեսչություն Կանոնակարգով նախատեսված ժամկետում՝ 6-րդ հոդվածի համաձայն, գերատեսչությունը վերականգնում է առաջնության իրավունքը, եթե.

i) այդ մասին միջնորդություն է ներկայացվել գերատեսչություն՝ Կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան,

ii) միջնորդությունը ներկայացվել է ավելի վաղ ներկայացված հայտի պատճենի ներկայացման համար Կանոնակարգով սահմանված ժամկետի ընթացքում՝ 6-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն,

iii) գերատեսչությունը գտնում է, որ պատճենը ներկայացնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացված է գերատեսչություն, ուր ավելի վաղ ներկայացվել է հայտը, Կանոնակարգով սահմանված ժամկետի ընթացքում, և

iv) ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը ներկայացվել է գերատեսչություն՝ Կանոնակարգով սահմանված ժամկետի ընթացքում:

4) [*Տուրքեր*] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, 1-3-րդ պարբերությունների համաձայն, միջնորդության առնչությամբ տուրքերի վճարում:

5) [*Փաստեր*] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ գերատեսչության կողմից սահմանված ժամկետի ընթացքում գերատեսչություն ներկայացվեն 2-րդ պարբերության iii ենթակետում նշված պատճառները հիմնավորող ցանկացած հայտարարություն կամ այլ փաստ:

6) [*Դիտողություններ ներկայացնելու հնարավորությունը մերժման մտադրության դեպքում*] 1-3-րդ պարբերություններով սահմանված միջնորդությունը չի կարող լրիվ կամ մասնակի մերժվել՝ առանց միջնորդող կողմին ողջամիտ ժամկետի ընթացքում նախատեսվող մերժման կապակցությամբ դիտողություններ ներկայացնելու հնարավորություն տալու:

Հոդված 14. Կանոնակարգ

1) [*Բովանդակություն*] ա) Սույն Պայմանագրին կից Կանոնակարգը նախատեսում է կանոններ, որոնք վերաբերում են.

i) այն հարցերին, որոնց վերաբերյալ սույն Պայմանագիրը հստակ նախատեսում է, որ պետք է «սահմանված լինեն Կանոնակարգով»,

ii) մանրամասներ, որոնք օգտակար են սույն Պայմանագրի դրույթներն իրականացնելիս,

iii) վարչական պահանջներ, հարցեր կամ գործընթացներ:

բ) Կանոնակարգը նախատեսում է նաև ձևական պահանջներին վերաբերող կանոններ, որոնք Պայմանավորվող կողմին թույլատրված են կիրառել.

i) անվան կամ հասցեի փոփոխության արձանագրման,

ii) հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխությունների արձանագրման,

iii) լիցենզիայի կամ գրավի արձանագրման,

iv) սխալների ուղղման միջնորդությունների նկատմամբ:

գ) Կանոնակարգը նաև նախատեսում է Տիպային միջազգային ձևանմուշների հաստատում, ինչպես նաև Ասամբլեայի կողմից դիմումի ձևանմուշի հաստատում 6-րդ հոդվածի 2-րդ պարբերության «բ» ենթակետի նպատակների համար՝ Միջազգային բյուրոյի աջակցությամբ:

2) [*Կանոնակարգում ուղղումներ կատարելը*] 3-րդ պարբերության համաձայն՝ Կանոնակարգում ցանկացած ուղղում կատարելու համար պահանջվում է ներկայացված ձայների երեք քառորդը:

3) [*Միաձայն որոշման պահանջ*] ա) Կանոնակարգը կարող է առանձնանջել Կանոնակարգի այն դրույթները, որոնցում ուղղումներ պետք է կատարվեն միայն միաձայն որոշմամբ:

բ) Կանոնակարգում ցանկացած ուղղում կատարելը, որը հանգեցնում է Կանոնակարգով սահմանված դրույթներին

դրույթներ ավելացնելուն կամ դրանից դրույթներ հանելուն՝ «ա» ենթակետի համաձայն պահանջում է միաձայն որոշում:

զ) Որոշելու համար, թե արդյոք միաձայնություն ձեռք է բերվել, հաշվի են առնվում այն ձայները, որոնք իրականում տրվել են: Ձեռնպահ ձայները՝ իբրև ձայն, հաշվի չեն առնվում:

4) [Պայմանագրի և Կանոնակարգի միջև հակասությունը] Սույն Պայմանագրի և Կանոնակարգի դրույթների միջև հակասությունների դեպքում գերակայում է առաջինը:

Հոդված 15. Փարիզյան կոնվենցիայի հետ կապը

1) [Փարիզյան կոնվենցիան պահպանելու պարտավորություն] Պայմանավորվող յուրաքանչյուր կողմ պահպանում է Արտոնագրերի վերաբերյալ Փարիզյան կոնվենցիայի դրույթները:

2) [Փարիզյան կոնվենցիայով ստանձնած պարտավորություններ և իրավունքներ] ա) Սույն Պայմանագրում ոչինչ չի վերացնում այն պարտավորությունները, որոնք Պայմանավորվող կողմերն ունեն միմյանց հանդեպ Փարիզյան կոնվենցիային համապատասխան:

բ) Սույն Պայմանագրում ոչինչ չի վերացնում այն իրավունքները, որոնցից օգտվում են հայտատուներն ու իրավատերերը՝ Փարիզյան կոնվենցիային համապատասխան:

Հոդված 16. Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրում վերանայումների, ուղղումների և փոփոխությունների ազդեցությունը

1) [Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրում վերանայումների, լրացումների և փոփոխությունների կիրառելիությունը] 2-րդ պարբերության համաձայն՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրում 2000 թվականի հունիսի 2-ից հետո արված ցանկացած վերանայում, ուղղում կամ փոփոխություն, որը համապատասխանում է սույն Պայմանագրի դրույթներին, պետք է կիրառվի սույն Պայմանագրի և Կանոնակարգի նպատակների համար, եթե Ասամբլեան յուրաքանչյուր առանձին դեպքում ընդունում է այդպիսի որոշում ներկայացված ձայների երեք քառորդով:

2) [Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի անցումային դրույթները չկիրառելը] Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ցանկացած դրույթ, որի ուժով այդ Պայմանագրի վերանայված, ուղղված կամ փոփոխված որևէ դրույթ չի կիրառվում այդ Պայմանագրի մասնակից պետության կամ այդ պետության կամ նրա անունից գործող գերատեսչության նկատմամբ, քանի որ այդ դրույթը անհամատեղելի է տվյալ պետության կամ գերատեսչության կողմից կիրառվող օրենսդրության հետ, չպետք է կիրառվի սույն Պայմանագրի և Կանոնակարգի նպատակների համար:

Հոդված 17. Ասամբլեան

1) [Կազմը] ա) Պայմանավորվող կողմերը պետք է ունենան Ասամբլեա:

բ) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Ասամբլեայում ներկայացված է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդական և փորձագետներ: Յուրաքանչյուր պատվիրակ կարող է ներկայացնել միայն մեկ Պայմանավորվող կողմի:

2) [Գործառույթները] Ասամբլեան՝

i) զբաղվում է սույն Պայմանագրի պահպանմանը, զարգացմանն ու կիրառմանը վերաբերող հարցերով,

ii) մշակում է միջազգային տիպային ձևանմուշներ և Միջազգային բյուրոյի աջակցությամբ՝ 14-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» ենթակետով նախատեսված հայտի ձևանմուշ,

iii) Կանոնակարգում կատարում է լրացումներ,

iv) սահմանում է ii ենթակետով նախատեսված յուրաքանչյուր միջազգային տիպային ձևանմուշի և հայտի ձևանմուշի ու iii ենթակետով նախատեսված յուրաքանչյուր լրացման կիրառման ամսաթիվը որոշելու պայմանները,

v) 16-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան՝ որոշում է՝ կիրառելի է արդյոք Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ցանկացած վերանայում, լրացում կամ փոփոխություն սույն Պայմանագրի և

Կանոնակարգի նպատակների համար,

vi) կատարում է սույն Պայմանագրից բխող այլ գործառնություններ:

3) [*Քվորում*] ա) Ասամբլեայի անդամների կեսը, որոնք պետություն են, կազմում են քվորումը:

բ) Չնայած «ա» ենթակետի դրոշմներին՝ եթե որևէ նստաշրջանին ներկայացած Ասամբլեայի անդամների թիվը, որոնք պետություն են, կազմում է կեսից քիչ, բայց հավասար է կամ ավելի է Ասամբլեայի այն անդամների թվի մեկ երրորդից, որոնք պետություն են, Ասամբլեան կարող է որոշում ընդունել, սակայն Ասամբլեայի բոլոր որոշումները, բացառությամբ իր սեփական ընթացակարգին վերաբերող որոշումների, ուժի մեջ են մտնում միայն ներքոնշյալ պայմանները կատարելու դեպքում: Միջազգային բյուրոն նշված որոշումները հաղորդում է Ասամբլեայի անդամներին, որոնք պետություններ են և ներկայացված չեն եղել, և առաջարկում է որոշումը հաղորդելու ամսաթվից հետո՝ եռամսյա ժամկետում, գրավոր հայտնել իրենց քվեարկության արդյունքը կամ ձեռնպահ լինելը: Եթե այդ ժամկետի ավարտին այդ եղանակով քվեարկված կամ ձեռնպահ եղած անդամների քանակը հասնում է անդամների այն քանակին, որը չէր բավականացնում տվյալ նստաշրջանում քվորում ունենալու համար, այդ որոշումներն ուժի մեջ են մտնում՝ պայմանով, որ միաժամանակ պահպանվում է անհրաժեշտ մեծամասնությունը:

4) [*Ասամբլեայում որոշումներ կայացնելը*] ա) Ասամբլեան ձգտում է իր որոշումներն ընդունել ընդհանուր համաձայնությամբ:

բ) Եթե որոշումները հնարավոր չէ ընդունել ընդհանուր համաձայնությամբ, քննարկվող հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է քվեարկությամբ: Այդ դեպքում՝

i) յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը հանդիսանում է պետություն, ունի մեկ ձայն և քվեարկում է միայն իր անունից, և

ii) ցանկացած Պայմանավորվող կողմ, որը հանդիսանում է միջկառավարական կազմակերպություն, կարող է մասնակցել քվեարկությանը իր մասնակից պետության փոխարեն, ընդ որում՝ ձայների թիվը պետք է հավասար լինի սույն Պայմանագրի կողմ հանդիսացող իր անդամ պետությունների թվին: Այդպիսի ոչ մի միջկառավարական կազմակերպություն չպետք է մասնակցի քվեարկությանը, եթե իր անդամ պետություններից ցանկացածն օգտվում է քվեարկելու իր իրավունքից և՛ հակառակը: Ի հավելումն՝ այդպիսի ոչ մի միջկառավարական կազմակերպություն չպետք է մասնակցի քվեարկությանը, եթե սույն Պայմանագրի կողմ հանդիսացող իր ցանկացած անդամ պետություն հանդիսանում է մեկ այլ նման միջկառավարական կազմակերպության անդամ պետություն, և վերջինս մասնակցում է քվեարկությանը:

5) [*Մեծամասնություն*] ա) Հաշվի առնելով 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունները, 16-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, ինչպես նաև 19-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը, Ասամբլեայի որոշումների համար պահանջվում է ներկայացված ձայների երկու երրորդը:

բ) Որոշելու համար, թե արդյոք ձեռք է բերվել անհրաժեշտ մեծամասնությունը, հաշվի են առնվում միայն քվեարկության ժամանակ տրված ձայները: Ձեռնպահ ձայները քվե չեն համարվում:

6) [*Նստաշրջաններ*] Ասամբլեան գումարում է հերթական նստաշրջանը երկու տարին մեկ անգամ՝ Գլխավոր տնօրենի հրավերով:

7) [*Ընթացակարգի կանոններ*] Ասամբլեան ընդունում է ընթացակարգի իր կանոնները, այդ թվում՝ նաև արտակարգ նստաշրջան հրավիրելու կանոնները:

Հոդված 18. Միջազգային բյուրո

1) [*Վարչական գործառնություններ*] ա) Միջազգային բյուրոն իրականացնում է սույն Պայմանագրին վերաբերող վարչական գործառնությունները:

բ) Մասնավորապես Միջազգային բյուրոն նախապատրաստում է նիստերը և ապահովում Ասամբլեայի Քարտուղարությունը և փորձագետների այնպիսի կոմիտեների ու աշխատանքային խմբերի գործառնությունները, որոնք կարող են ստեղծվել Ասամբլեայի կողմից:

2) [*Ասամբլեայի նստաշրջանից բացի՝ այլ նիստեր*] Գլխավոր տնօրենը հրավիրում է Ասամբլեայի ստեղծած

ցանկացած կոմիտեի ու աշխատանքային խմբերի նիստեր:

3) [Միջազգային բյուրոյի դերը Ասամբլեայի և այլ նիստերում] ա) Գլխավոր տնօրենը և Գլխավոր տնօրենի կողմից նշանակված անձինք մասնակցում են Ասամբլեայի և Ասամբլեայի կողմից ստեղծված կոմիտեների և աշխատանքային խմբերի բոլոր նիստերին՝ առանց ձայնի իրավունքի:

բ) Գլխավոր տնօրենը կամ Գլխավոր տնօրենի կողմից նշանակված աշխատակազմի անդամը հանդիսանում է «ա» ենթակետում նշված Ասամբլեայի, կոմիտեների և աշխատանքային խմբերի ի պաշտոնե քարտուղար:

4) [Կոնֆերանսներ] ա) Միջազգային բյուրոն, Ասամբլեայի նշումներին համապատասխան, իրականացնում է ցանկացած վերանայման կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքները:

բ) Միջազգային բյուրոն նշված նախապատրաստական հարցերի շուրջ կարող է խորհրդակցել Կազմակերպության անդամ պետությունների, միջկառավարական կազմակերպությունների և միջազգային ու ազգային հասարակական կազմակերպությունների հետ:

գ) Գլխավոր տնօրենը և Գլխավոր տնօրենի կողմից նշանակված անձինք մասնակցում են վերանայման կոնֆերանսներում հարցերի քննարկմանը՝ առանց ձայնի իրավունքի:

5) [Այլ գործառնություններ] Միջազգային բյուրոն իրականացնում է իրեն հանձնարարված, սույն Պայմանագրին առնչվող ցանկացած այլ գործառնություն:

Հոդված 19. Վերանայումներ

1) [Պայմանագրի վերանայումը] 2-րդ պարբերության համաձայն՝ սույն Պայմանագիրը կարող է վերանայվել Պայմանավորվող կողմերի կոնֆերանսի կողմից: Վերանայման ցանկացած կոնֆերանս գումարելու մասին որոշումն ընդունվում է Ասամբլեայի կողմից:

2) [Պայմանագրի որոշ դրույթների վերանայումը կամ ուղղումը] 17-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ պարբերություններում ուղղումներ կարող են կատարվել կա՛մ վերանայման կոնֆերանսի կողմից, կա՛մ Ասամբլեայի կողմից՝ 3-րդ պարբերության դրույթներին համապատասխան:

3) [Ասամբլեայի կողմից Պայմանագրի որոշ դրույթների ուղղումը] ա) 17-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ պարբերություններում Ասամբլեայի կողմից ուղղումներ կատարելու մասին առաջարկություններ կարող է ձեռնարկել Պայմանավորվող ցանկացած կողմ կամ Գլխավոր տնօրենը: Այդպիսի առաջարկությունները Գլխավոր տնօրենն ուղարկում է Պայմանավորվող կողմերին Ասամբլեայի կողմից դրանք քննարկվելուց առնվազն վեց ամիս առաջ:

բ) «ա» ենթակետով նախատեսված դրույթների ցանկացած ուղղում ընդունելու համար պահանջվում է ձայների երեք քառորդ մեծամասնություն:

գ) «ա» ենթակետով նախատեսված դրույթների ցանկացած ուղղում ուժի մեջ է մտնում երեք ամիս անց այն բանից հետո, երբ այդ ուղղումն ընդունելու մասին յուրաքանչյուր Պայմանավորվող կողմից, իր համապատասխան սահմանադրական գործընթացների համաձայն, ուղղումներն ընդունվելու մասին գրավոր ծանուցումներ են ստացվում Գլխավոր տնօրենի կողմից, ուղղումն ընդունելու պահին Ասամբլեայի անդամ հանդիսացող Պայմանավորվող կողմերի երեք քառորդից: Այս կերպ ընդունված ցանկացած ուղղում նշված դրույթներում իրավապարտադիր է բոլոր Պայմանավորվող կողմերի համար ուղղումներն ուժի մեջ մտնելու պահից սկսած, ինչպես նաև այն պետությունների և միջկառավարական կազմակերպությունների համար, որոնք Պայմանավորվող կողմեր կդառնան ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո:

Հոդված 20. Պայմանագրի կողմ դառնալը

1) [Պետությունները] Ցանկացած պետություն, որը Փարիզյան կոնվենցիայի կողմ է, կամ որը հանդիսանում է Կազմակերպության անդամ, և որի նկատմամբ արտոնագրեր կարող են տրվել կա՛մ այդ պետության գերատեսչության միջոցով, կա՛մ այլ պետության գերատեսչության կամ միջկառավարական կազմակերպության միջոցով, կարող է դառնալ սույն Պայմանագրի կողմ:

2) [Միջկառավարական կազմակերպություններ] Ցանկացած միջկառավարական կազմակերպություն կարող է դառնալ սույն Պայմանագրի կողմ, եթե այդ միջկառավարական կազմակերպության առնվազն մեկ անդամ պետություն

Փարիզյան կոնվենցիայի կամ Կազմակերպության անդամ է, իսկ միջկառավարական կազմակերպությունը հայտարարում է, որ, իր ներքին ընթացակարգերին համապատասխան, պատշաճ կերպով լիազորված է դառնալու սույն Պայմանագրի կողմ և հայտարարում է, որ՝

i) ինքն իրավասու է արտոնագրեր տալու, որոնք գործում են իր անդամ պետությունների նկատմամբ կամ

ii) սույն Պայմանագրով կարգավորվող հարցերի վերաբերյալ ունի իրավասություն և իր սեփական օրենսդրությունը, որն իրավապարտադիր է իր անդամ պետությունների համար, և ունի կամ լիազորել է տարածաշրջանային գերատեսչությանը՝ արտոնագրեր տալ, որոնք, այդ օրենսդրության համաձայն, վավեր են իր տարածքում:

3-րդ պարբերության համաձայն՝ ցանկացած այդպիսի հայտարարություն կատարվում է վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու ժամանակ:

3) [Տարածաշրջանային արտոնագրային կազմակերպություններ] Եվրոպական արտոնագրային կազմակերպությունը, Եվրասիական արտոնագրային կազմակերպությունը և Արդյունաբերական սեփականության աֆրիկյան տարածաշրջանային կազմակերպությունը, 2-րդ պարբերության i կամ ii ենթակետով նախատեսված հայտարարությունը սույն Պայմանագրին ընդունման Դիվանագիտական համաժողովում կատարելով հայտարարություն, կարող են դառնալ սույն Պայմանագրի կողմ՝ որպես միջկառավարական կազմակերպություն, եթե վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս հայտարարում են, որ, իրենց ներքին ընթացակարգերի համաձայն, պատշաճ կերպով լիազորված են դառնալու սույն Պայմանագրի կողմ:

4) [Վավերացումը կամ միանալը] Ցանկացած պետություն կամ միջկառավարական կազմակերպություն, որը բավարարում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ պարբերությունների պայմանները, կարող է ի պահ հանձնել՝

i) վավերացման մասին փաստաթուղթը, եթե նա ստորագրել է սույն Պայմանագիրը, կամ

ii) միանալու մասին փաստաթուղթը, եթե չի ստորագրել սույն Պայմանագիրը:

Հոդված 21. Ուժի մեջ մտնելը, վավերացման և միանալու ուժի մեջ մտնելու ամսաթվերը

1) [Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը] Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում տասը պետության կողմից Գլխավոր տնօրենին վավերացման կամ միանալու մասին իրենց փաստաթղթերն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

2) [Վավերացման կամ միանալու ուժի մեջ մտնելու ամսաթվերը] Սույն Պայմանագիրն իրավապարտադիր է.

i) 1-ին պարբերության մեջ նշված տասը պետության համար՝ սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից,

ii) ցանկացած այլ պետության համար՝ այն ամսաթվից հետո երեք ամիս անց, որով այդ պետությունը Գլխավոր տնօրենին ի պահ է հանձնում վավերացման կամ միանալու մասին իր փաստաթուղթը, կամ այդ փաստաթղթում նշված ավելի ուշ ցանկացած ամսաթվից սկսած, բայց ոչ ուշ, քան այդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց վեց ամիս անց,

iii) Եվրոպական արտոնագրային կազմակերպության, Եվրասիական արտոնագրային կազմակերպության և Արդյունաբերական սեփականության աֆրիկյան տարածաշրջանային կազմակերպության համար՝ յուրաքանչյուրի՝ վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս հետո կամ այդ փաստաթղթում նշված ավելի ուշ ցանկացած ամսաթվից սկսած, բայց ոչ ուշ, քան այդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց վեց ամիս անց, եթե այդ փաստաթուղթն ի պահ է հանձնվել սույն Պայմանագիրը 1-ին պարբերության համաձայն ուժի մեջ մտնելուց հետո, կամ երեք ամիս հետո սույն Պայմանագրին ուժի մեջ մտնելուց հետո, եթե այդ փաստաթուղթն ի պահ է հանձնվել նախքան սույն Պայմանագրին ուժի մեջ մտնելը,

iv) ցանկացած այլ միջկառավարական կազմակերպության համար, որն իրավունք ունի դառնալու սույն Պայմանագրի կողմ, վավերացման կամ միացման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս հետո կամ այդ փաստաթղթում նշված ավելի ուշ ցանկացած թվականից սկսած, բայց ոչ ուշ, քան այդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց վեց ամիս անց:

Հոդված 22. Պայմանագրի կիրառումը գոյություն ունեցող հայտերի և արտոնագրերի նկատմամբ

1) [Սկզբունքը] 2-րդ պարբերության համաձայն՝ Պայմանավորվող կողմը կիրառում է սույն Պայմանագրի և Կանոնակարգի դրույթները, բացառությամբ 5-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների և դրանց

վերաբերող Կանոնների, այն ամսաթվի դրությամբ ընթացքում գտնվող հայտերի և գործող արտոնագրերի նկատմամբ, որով Պայմանագիրը իրավապարտադիր է դառնում այդ Պայմանավորվող կողմի համար՝ 21-րդ հոդվածին համապատասխան:

2) [Ընթացակարգեր] Պայմանավորվող ոչ մի կողմ պարտավոր չէ կիրառելու սույն Պայմանագրի կամ Կանոնակարգի դրույթները 1-ին պարբերությամբ նախատեսված հայտերի կամ արտոնագրերի ցանկացած գործընթացի կամ գործավարության նկատմամբ, եթե այդ գործընթացը մեկնարկել է նախքան այն ամսաթիվը, որով Պայմանագիրն իրավապարտադիր է դառնում այդ Պայմանավորվող կողմի համար՝ 21-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 23. Վերապահումներ

1) [Վերապահում] Ցանկացած պետություն կամ միջկառավարական կազմակերպություն վերապահման միջոցով կարող է հայտարարել, որ 6-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթները չեն կիրառվում միասնական գյուտերին առնչվող պահանջի նկատմամբ, որը կիրառվում է միջազգային հայտի նկատմամբ՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի համաձայն,

2) [Վերապահում կատարելու եղանակները] 1-ին պարբերության համաձայն՝ ցանկացած վերապահում կատարվում է հայտարարությամբ, որը կցվում է վերապահում կատարող պետության կամ միջկառավարական կազմակերպության՝ սույն Պայմանագրի վավերացման կամ միանալու մասին փաստաթղթին:

3) [Հետ վերցնելը] 1-ին պարբերության համաձայն՝ ցանկացած վերապահում կարող է ցանկացած ժամանակ հետ վերցվել:

4) [Այլ վերապահումների արգելանք] Բացառությամբ 1-ին պարբերությամբ նախատեսված դեպքերի՝ չի թույլատրվում սույն Պայմանագրի նկատմամբ ոչ մի այլ վերապահում:

Հոդված 24. Պայմանագիրը չեղյալ հայտարարելը

1) [Ծանուցումը] Պայմանավորվող ցանկացած կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Պայմանագիրը Գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկելու միջոցով:

2) [Ուժի մեջ մտնելու ամսաթիվը] Ցանկացած չեղյալ հայտարարում ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալու ամսաթվից մեկ տարի հետո կամ ծանուցման մեջ նշված ավելի ուշ ցանկացած ամսաթվով: Չեղյալ հայտարարումը չի ազդում քննարկման ընթացքում գտնվող ցանկացած հայտի կամ գործող ցանկացած արտոնագրի նկատմամբ սույն Պայմանագրի կիրառման վրա, որոնք գործում են չեղյալ հայտարարող Պայմանավորվող կողմի նկատմամբ չեղյալ հայտարարելն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ:

Հոդված 25. Պայմանագրի լեզուները

1) [Բնօրինակ տեքստեր] Սույն Պայմանագիրը ստորագրվում է մեկ օրինակով, անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը ամբողջովին հավասարազոր են:

2) [Պաշտոնական տեքստեր] Պաշտոնական տեքստը 1-ին պարբերության մեջ նշված լեզուներից այլ որևէ լեզվով հաստատվում է շահագրգիռ կողմերի հետ Գլխավոր տնօրենի խորհրդակցելուց հետո: Սույն կետի նպատակների համար՝ շահագրգիռ կողմ նշանակում է՝ ցանկացած պետություն, որը հանդիսանում է Պայմանագրի կողմ կամ կարող է դառնալ Պայմանագրի կողմ՝ 20-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն, որի պաշտոնական լեզուն կամ պաշտոնական լեզուներից մեկն ընդգրկված է, և՛ Եվրոպական արտոնագրային կազմակերպությունը, Եվրասիական արտոնագրային կազմակերպությունը և Արդյունաբերական սեփականության աֆրիկյան տարածաշրջանային կազմակերպությունը, ինչպես նաև ցանկացած այլ միջկառավարական կազմակերպություն, որը հանդիսանում է սույն Պայմանագրի կողմ կամ կարող է դառնալ Պայմանագրի կողմ, եթե նրա պաշտոնական լեզուներից մեկն ընդգրկված լեզուներից է:

3) [Բնօրինակ տեքստերի գերակայությունը] Սույն Պայմանագրի պաշտոնական և բնօրինակ տեքստերի մեկնաբանության տարակարծության դեպքում՝ գերակայում են բնօրինակ տեքստերը:

Հոդված 26. Պայմանագրի ստորագրումը

Սույն Պայմանագիրը բաց է ցանկացած պետության ստորագրման համար, որն իրավասու է դառնալու Պայմանագրի կողմ՝ 20 հոդվածի 1-ին պարբերության համաձայն, և՛ Եվրոպական արտոնագրային կազմակերպության, Եվրասիական

արտոնագրային կազմակերպության և Արդյունաբերական սեփականության աֆրիկյան տարածաշրջանային կազմակերպության համար՝ Կազմակերպության նստավայրում այն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Հոդված 27. Ավանդապահը, գրանցումը

- 1) [Ավանդապահը] Սույն Պայմանագրի ավանդապահն է Գլխավոր տնօրենը:
- 2) [Գրանցումը] Գլխավոր տնօրենը սույն Պայմանագիրը գրանցում է Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում:

Դիվանագիտական կոնֆերանսի կողմից համաձայնեցված հայտարարություններ Արտոնագրային իրավունքի մասին պայմանագրի և Արտոնագրային իրավունքի մասին պայմանագրով նախատեսված կանոնակարգի վերաբերյալ**

- 1. 1-ին հոդվածի xiv կետն ընդունելիս Դիվանագիտական կոնֆերանսը հասկացավ, որ «գերատեսչությունում ընթացակարգ» բառերը չեն ներառում կիրառելի օրենսդրությամբ նախատեսված դատական ընթացակարգերը:
- 2. 1-ին հոդվածի xvii կետը, 6-րդ հոդվածը և 17-րդ հոդվածի 2-րդ պարբերության v ենթակետն ընդունելիս Դիվանագիտական կոնֆերանսը հասկացավ, որ՝
 - 1) ԱԻՊ Ասամբլեան, երբ հարկն է, կգումարվի ԱՀՊ Ասամբլեայի նիստերի հետ համատեղ:
 - 2) Ի լրումն ԱՀՊ կողմ հանդիսացող պետությունների՝ ԱԻՊ Պայմանավորվող կողմերի հետ, երբ հարկն է, կանցկացվեն խորհրդակցություններ ԱՀՊ Վարչական հրահանգներում առաջարկվող փոփոխությունների առնչությամբ:
 - 3) Գլխավոր տնօրենը կառաջարկի ԱՀՊ Ասամբլեայի որոշման համար, որ ԱԻՊ պայմանավորվող կողմերը, որոնք ԱՀՊ կողմ չեն, իբրև դիտորդներ՝ հրավիրվեն ԱՀՊ նիստերին և ԱՀՊ այլ մարմինների նիստերին, եթե հարկն է:
 - 4) Եթե ԱԻՊ Ասամբլեան որոշում է, որ 16-րդ հոդվածով նախատեսված՝ ԱՀՊ վերանայումը, ուղղումը կամ փոփոխությունը պետք է կիրառվեն ԱԻՊ նպատակների համար, Ասամբլեան կարող է նախատեսել ԱԻՊ-ում անցումային դրույթներ մասնավոր դեպքերում:
- 3. 6-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ հոդվածի 3-րդ պարբերությունները և 4-րդ և 14-րդ կանոններն ընդունելիս Դիվանագիտական կոնֆերանսը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը խրախուսեց՝ հանձնարարել առաջնության փաստաթղթերի թվային գրադարանի ստեղծումը: Նման համակարգն օգտավետ կլինի թե՛ արտոնագրատերերի, թե՛ այլոց համար, ովքեր ցանկանում են առաջնության փաստաթղթերին հասանելիություն ունենալ:
- 4. և 5.....¹
- 6. Համաձայնեցվեց, որ երկու կամ ավելի պայմանավորվող կողմերի միջև ծագած ցանկացած վեճ՝ սույն Պայմանագրի և դրա Կանոնակարգի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ, պետք է լուծվի բարեկամական խորհրդակցության կամ Գլխավոր տնօրենի հովանու ներքո միջնորդության միջոցով:

** Պաշտոնական անգլերեն անվանում:
 Աղբյուրը՝ ՄՍՀԿ-ի Միջազգային բյուրո:
 Ծանոթ.: Միայն Արտոնագրային իրավունքի մասին պայմանագրի վերաբերող համաձայնեցված հայտարարություններն են ներկայացված այստեղ: Արտոնագրային իրավունքի մասին պայմանագրով նախատեսված՝ Կանոնակարգին վերաբերող համաձայնեցված հայտարարությունների համար տե՛ս Արտադրական սեփականության օրենքներ և պայմանագրեր, ԲԱԶՄԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ-Տեքստ 2-016:
¹ Տե՛ս Արտադրական սեփականության օրենքներ և պայմանագրեր, ԲԱԶՄԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ-Տեքստ 2-016 (խմբագրի ծանոթագրություն)

Կանոնակարգ

**Արտոնագրային իրավունքի մասին պայմանագրի ներքո
(Գործում է 2006թ. հունվարի 1-ից)**

Բովանդակության ցանկ

- Կանոն 1. Համառոտագրված արտահայտություններ
- Կանոն 2. Մանրամասներ հայտը ներկայացնելու ամսաթվի վերաբերյալ՝ 5-րդ հոդվածի համաձայն
- Կանոն 3. Մանրամասներ հայտի վերաբերյալ՝ 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն

Կանոն 4. 6-րդ հոդվածի 5-րդ պարբերության և 2-րդ կանոնի 4-րդ կետի համաձայն՝ ավելի վաղ ներկայացված հայտի կամ, 2-րդ կանոնի 5-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, նախկինում ներկայացված հայտի առկայություն

Կանոն 5. Փաստեր՝ 6-րդ հոդվածի 6-րդ պարբերության և 8-րդ հոդվածի 4-րդ պարբերության «գ» ենթակետի և 7-րդ կանոնի 4-րդ, 15-րդ կանոնի 4-րդ, 16-րդ կանոնի 6-րդ, 17-րդ կանոնի 6-րդ և 18-րդ կանոնի 4-րդ կետերի համաձայն

Կանոն 6. Հայտի վերաբերյալ ժամկետային սահմանափակումները՝ 6-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն

Կանոն 7. Մանրամասներ ներկայացուցչության վերաբերյալ՝ 7-րդ հոդվածի համաձայն

Կանոն 8. Տեղեկատվության ներկայացումը՝ 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն

Կանոն 9. Մանրամասներ ստորագրության վերաբերյալ՝ 8-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն

Կանոն 10. Մանրամասներ նշումների վերաբերյալ՝ 8-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն

Կանոն 11. Տեղեկատվության վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ՝ 8-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն

Կանոն 12. Ժամկետային սահմանափակումներին վերաբերող մանրամասներ՝ 11-րդ հոդվածի համաձայն

Կանոն 13. Մանրամասներ գերատեսչության՝ պատշաճ միջոցներ ձեռնարկելը կամ չկանխատեսվածության փաստը հայտնաբերելուց հետո իրավունքների վերականգնման վերաբերյալ՝ 12-րդ հոդվածի համաձայն

Կանոն 14. Մանրամասներ առաջնության խնդրարկման ուղղումների կամ լրացումների և առաջնության իրավունքի վերականգնման վերաբերյալ՝ 13-րդ հոդվածի համաձայն

Կանոն 15. Միջնորդություն՝ անվան կամ հասցեի փոփոխությունն արձանագրելու համար

Կանոն 16. Միջնորդություն՝ հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխությունն արձանագրելու համար

Կանոն 17. Միջնորդություն՝ լիցենզիայի կամ գրավի իրավունքի մասին արձանագրելու համար

Կանոն 18. Միջնորդություն՝ սխալներն ուղղելու համար

Կանոն 19. Հայտի նույնականացման եղանակ՝ առանց հայտի համարի

Կանոն 20. Միջազգային տիպային ձևանմուշների հաստատում

Կանոն 21. Միաձայնության պահանջ՝ 14-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն

Կանոն 1

Համառոտագրված արտահայտություններ

1) [«Պայմանագիր», «հոդված»] ա) Սույն Կանոնակարգում «Պայմանագիր» բառը նշանակում է՝ Արտոնագրային իրավունքի մասին պայմանագիր:

բ) Սույն Կանոնակարգում «հոդված» բառը վերաբերում է Պայմանագրի որոշակի հոդվածին:

2) [Պայմանագրում սահմանված համառոտագրված արտահայտություններ] 1-ին հոդվածում սահմանված համառոտագրված արտահայտությունները սույն Պայմանագրի նպատակների համար նույն նշանակությունն ունեն նաև սույն Կանոնակարգի նպատակների համար:

Կանոն 2

*Մանրամասներ հայտը ներկայացնելու ամսաթվի վերաբերյալ՝
5-րդ հոդվածի համաձայն*

1) [Ճամկետային սահմանափակումներ՝ 5-րդ հոդվածի 3-րդ պարբերության և 4-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն] Հաշվի առնելով կետ 2 պարբերությունը՝ 5-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում և 4 պարբերության «բ» ենթակետում նշված ժամկետը պետք է կազմի երկու ամսից ոչ պակաս 5-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված ծանուցման ամսաթվից:

2) [Բացառություն ժամկետային սահմանափակումների վերաբերյալ՝ 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն] Եթե 5-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված ծանուցումը չի կատարվել այն պատճառով, որ չեն ներկայացվել անհրաժեշտ նշումներ, որոնք թույլ կտան գերատեսչությանը կապ հաստատել հայտատուի հետ, ապա 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության «բ» ենթակետում նշված ժամկետը կազմում է երկու ամսից ոչ պակաս այն ամսաթվից, որով գերատեսչությունն առաջին անգամ ստացել է 5-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» ենթակետում նշված մեկ կամ մի քանի բաղադրիչները:

3) [Ճամկետային սահմանափակումներ 5-րդ հոդվածի 6-րդ պարբերության «ա» և «բ» ենթակետերի համաձայն] 5-րդ հոդվածի 6-րդ պարբերության «ա» և «բ» ենթակետերում նշված ժամկետները կազմում են.

i) ոչ պակաս, քան երկու ամիս ծանուցման ամսաթվից հետո, եթե ծանուցումը կատարվել է՝ 5-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն,

ii) եթե ծանուցում չի կատարվել ոչ պակաս, քան երկու ամիս այն ամսաթվից հետո, որով գերատեսչությունն առաջին անգամ ստացել է 5-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» ենթակետում նշված մեկ կամ մի քանի բաղադրիչները:

4) [Պահանջներ՝ 5-րդ հոդվածի 6-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն] Պայմանավորվող ցանկացած կողմ, հաշվի առնելով 4-րդ կանոնի 3-րդ կետը, կարող է պահանջել, որ 5-րդ հոդվածի 6-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն՝ ներկայացման ամսաթիվը սահմանելու համար ներկայացվեն.

i) ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը 3-րդ կետով կիրառելի ժամկետում,

ii) ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը և դրա ներկայացման ամսաթիվը՝ վավերացված այն գերատեսչության կողմից, որին ավելի վաղ ներկայացվել է հայտը, գերատեսչության առաջարկով՝ այն ժամկետի ընթացքում, որը կազմում է նման առաջարկի ամսաթվից կամ 4-րդ կանոնի 1-ին կետի համաձայն կիրառելի ժամկետից ոչ պակաս, քան չորս ամիս՝ կախված այն բանից, թե դրանցից որն է ավելի շուտ լրանում,

iii) եթե ավելի վաղ ներկայացված հայտը կազմված չէ գերատեսչության համար ընդունելի լեզվով՝ ավելի վաղ ներկայացված հայտի թարգմանությունը 3-րդ կետով կիրառելի ժամկետի ընթացքում,

iv) նկարագրի պակասող մասը կամ պակասող գծագիրը, որն ամբողջությամբ պետք է պարունակվի ավելի վաղ ներկայացված հայտում,

v) հայտը՝ այն ամսաթվով, որով գերատեսչությունն առաջին անգամ ստացել է 5-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» ենթակետում նշված մեկ կամ մի քանի բաղադրիչները՝ պարունակելով նշում առ այն, որ ավելի վաղ ներկայացված հայտի բովանդակությունը ներառվել է այդ հայտում՝ հղման միջոցով,

vi) 3-րդ կետով կիրառելի ժամկետի ընթացքում նշում այն մասին, թե պարունակվում է արդյոք ավելի վաղ ներկայացված հայտում կամ iii ենթակետում նշված թարգմանության մեջ նկարագրի պակասող մասը կամ պակասող գծագիրը:

5) [Պահանջներ 5-րդ հոդվածի 7-րդ պարբերության «ա» ենթակետի համաձայն] ա) 5-րդ հոդվածի 7-րդ պարբերության «ա» ենթակետում նշված՝ ավելի վաղ ներկայացված՝ հայտին հղման մեջ նշվում է, որ ներկայացման ամսաթվի սահմանման նպատակով հայտի նկարագրի և գծագրերը փոխարինվել են ավելի վաղ ներկայացված՝ հայտին հղումով. հղման մեջ նաև նշվում է այդ հայտի համարը և այն գերատեսչությունը, որին ներկայացվել է այդ հայտը: Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ հղման մեջ նաև նշվի ավելի վաղ ներկայացված հայտի ամսաթիվը:

բ) Պայմանավորվող կողմը, հաշվի առնելով 4-րդ կանոնի 3-րդ կետը, կարող է պահանջել, որ գերատեսչություն ներկայացվի.

i) ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը և, եթե ավելի վաղ ներկայացված հայտը ներկայացվել է ոչ այն լեզվով, որն ընդունելի է գերատեսչության համար, ավելի վաղ ներկայացված այդ հայտի թարգմանությունը՝ այն ժամկետի ընթացքում, որը կազմում է ոչ պակաս, քան երկու ամիս՝ այն ամսաթվից, որով գերատեսչությունն ստացել է 5-րդ

հողվածի 7-րդ պարբերության «ա» ենթակետում նշված հղումը պարունակող հայտը,

ii) ավելի վաղ ներկայացված հայտի հաստատված պատճենը՝ այն ժամկետի ընթացքում, որը կազմում է ոչ պակաս, քան չորս ամիս՝ այն ամսաթվից, որով գերատեսչությունն ստացել է 5-րդ հողվածի 7-րդ պարբերության «ա» ենթակետում նշված հղումը պարունակող հայտը:

գ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 5-րդ հողվածի 7-րդ պարբերության «ա» ենթակետում նշված հղումը հղում կատարի հայտատուի կամ նրա նախորդի կամ իրավահաջորդի կողմից ավելի վաղ ներկայացված հայտին:

6) [Բացառություններ՝ 5-րդ հողվածի 8-րդ պարբերության ii ենթակետի համաձայն] 5-րդ հողվածի 8-րդ պարբերության ii ենթակետում նշված հայտերի տեսակներն են.

- i) առանձնացված հայտերը,
- ii) շարունակման կամ մասնակի շարունակման հայտերը,
- iii) նոր հայտատուների կողմից ներկայացված հայտերը, որոնք, ինչպես սահմանվել է, ունեն ավելի վաղ ներկայացված հայտում պարունակվող գյուտի նկատմամբ իրավունք:

Կանոն 3

Մանրամասներ հայտի վերաբերյալ՝

6-րդ հողվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն

1) [Լրացուցիչ պահանջներ՝ 6-րդ հողվածի 1-ին պարբերության iii ենթակետի համաձայն] ա) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ հայտատուն, որը ցանկանում է, որ իր հայտը քննարկվի որպես 2-րդ կանոնի 6-րդ կետի i ենթակետում նշված առանձնացված հայտ, նշի.

- i) որ ինքը ցանկանում է, որ հայտը քննարկվի որպես այդպիսին,
- ii) այն հայտի համարը և ներկայացման ամսաթիվը, որից հայտն առանձնացվել է:

բ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ հայտատուն, որը ցանկանում է, որ իր հայտը քննարկվի որպես 2-րդ կանոնի 6-րդ կետի iii ենթակետում նշված հայտ, նշի.

- i) որ ինքը ցանկանում է, որ հայտը քննարկվի որպես այդպիսին,
- ii) ավելի վաղ ներկայացված հայտի համարն ու ներկայացման ամսաթիվը:

գ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ հայտատուն, որը ցանկանում է, որ իր հայտը քննարկվի որպես լրացուցիչ արտոնագրի հայտ, նշի.

- i) որ ինքը ցանկանում է, որ հայտը քննարկվի որպես այդպիսին,
- ii) հիմնական հայտի համարն ու ներկայացման ամսաթիվը:

դ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ հայտատուն, որը ցանկանում է, որ իր հայտը քննարկվի որպես ավելի վաղ ներկայացված հայտի շարունակում կամ ավելի վաղ ներկայացված հայտի մասնակի շարունակում, նշի.

- i) որ ինքը ցանկանում է, որ հայտը քննարկվի որպես այդպիսին,
- ii) ավելի վաղ ներկայացված հայտի համարն ու ներկայացման ամսաթիվը:

ե) Եթե Պայմանավորվող կողմը միջկառավարական կազմակերպություն է, ապա կարող է պահանջել, որ հայտատուն նշի.

- i) միջնորդություն այն մասին, որ հայտատուն ցանկանում է ստանալ տարածաշրջանային արտոնագիր,
- ii) այդ միջկառավարական կազմակերպության այն անդամ պետությունները, որոնցում խնդրարկվում է գյուտի պահպանությունը:

2) [Հայտի ձևանմուշը՝ 6-րդ հողվածի 2-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն] Պայմանավորվող կողմը պետք է ընդունի 6-րդ հողվածի 2-րդ պարբերության «ա» ենթակետում նշված բովանդակության ներկայացումը.

- i) հայտի ձևանմուշով, եթե այդ ձևանմուշը համապատասխանում է Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի հայտի ձևանմուշին՝ 20-րդ կանոնի 2-րդ կետով արված ցանկացած փոփոխությամբ,
- ii) Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի հայտի ձևանմուշով, եթե հայտի այդ ձևանմուշին կցվում է նշում առ այն, որ հայտատուն ցանկանում է, որ հայտը քննարկվի որպես ազգային կամ տարածաշրջանային հայտ, և որի դեպքում հայտի ձևանմուշը պետք է ներառի i կետում նշված փոփոխությունները,
- iii) Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի հայտի ձևանմուշով, որը պարունակում է նշում առ այն, որ հայտատուն ցանկանում է, որ հայտը քննարկվի որպես ազգային կամ տարածաշրջանային հայտ, եթե Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրով հնարավոր է հայտի այդպիսի ձևանմուշի առկայություն:

3) [Պահանջներ՝ 6-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն] Պայմանավորվող կողմը կարող է, 6-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն, պահանջել գերատեսչության համար ընդունելի լեզվով կազմված հայտի անվանման, պահանջների և ռեֆերատի թարգմանությունը գերատեսչության համար ընդունելի ցանկացած այլ լեզվով:

Կանոն 4

6-րդ հոդվածի 5-րդ պարբերության և 2-րդ կանոնի 4-րդ կետի համաձայն՝ ավելի վաղ ներկայացված հայտի կամ, 2-րդ կանոնի 5-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, նախորդող հայտի առկայությունը

1) [Ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը՝ 6-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն] Հաշվի առնելով 3-րդ կետը՝ Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 6-րդ հոդվածի 5-րդ պարբերության մեջ նշված՝ ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը ներկայացվի գերատեսչություն այն ժամկետի ընթացքում, որը կազմում է ավելի վաղ ներկայացված այդ հայտի ամսաթվից հետո ոչ պակաս, քան 16 ամիս կամ, եթե առկա են ավելի վաղ ներկայացված մի քանի հայտեր, այդ հայտերի ներկայացման ամենավաղ ամսաթվից սկսած:

2) [Հաստատումը] Հաշվի առնելով 3-րդ կետը՝ Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 1-ին կետում նշված պատճենի, ինչպես նաև ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման ամսաթվի իսկությունը հաստատվեն այն գերատեսչության կողմից, որին ավելի վաղ ներկայացվել է հայտը:

3) [Նախորդող հայտի կամ ավելի վաղ ներկայացված հայտի առկայությունը] Պայմանավորվող ոչ մի կողմ չի պահանջում ներկայացնել ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը կամ դրա պատճենի և ամսաթվի հաստատումը, ինչպես նշված է 1-ին և 2-րդ կետերում և 2-րդ կանոնի 4-րդ կետում, կամ նախորդող հայտի պատճենը կամ դրա հաստատումը, ինչպես նշված է 2-րդ կանոնի 5-րդ կետի «բ» ենթակետում, եթե ավելի վաղ ներկայացված հայտը կամ նախորդող հայտը ներկայացվել է իր գերատեսչություն կամ հասանելի է այդ գերատեսչությանը թվային գրադարանից, որն ընդունելի է գերատեսչության կողմից այդ նպատակի համար:

4) [Թարգմանություն] Եթե ավելի վաղ ներկայացված հայտը գերատեսչության համար ընդունելի լեզվով չէ, և առաջնության ինտրարկման վավերականությունը կարևոր է գյուտի արտոնագրատունակությունը որոշելու համար, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 1-ին կետում նշված՝ ավելի վաղ ներկայացված հայտի թարգմանությունը ներկայացվի հայտատուի կողմից՝ գերատեսչության կամ այլ իրավասու մարմնի առաջարկով, այն ժամկետի ընթացքում, որը կազմում է ոչ պակաս, քան երկու ամիս այդ առաջարկի ամսաթվից, և ոչ պակաս, քան նշված կետի համաձայն կիրառելի ժամկետային սահմանափակումն է, եթե այդպիսին առկա է:

Կանոն 5

Փաստեր՝ 6-րդ հոդվածի 6-րդ պարբերության և 8-րդ հոդվածի 4-րդ պարբերության «գ» ենթակետի և 7-րդ կանոնի 4-րդ, 15-րդ կանոնի 4-րդ, 16-րդ կանոնի 6-րդ, 17-րդ կանոնի 6-րդ և 18-րդ կանոնի 4-րդ պարբերությունների համաձայն

Եթե գերատեսչությունը ծանուցում է հայտատուին, իրավասիքորը կամ այլ անձի, որ պահանջվում են 6-րդ հոդվածի 6-րդ պարբերությամբ և 8-րդ հոդվածի 4-րդ պարբերության «գ» ենթակետով և 7-րդ կանոնի 4-րդ, 15-րդ կանոնի 4-րդ, 16-րդ կանոնի 6-րդ, 17-րդ կանոնի 6-րդ և 18-րդ կանոնի 4-րդ պարբերություններով նախատեսվող փաստերը, ծանուցման մեջ նշվում է այն պատճառը, որով գերատեսչությունը հիմքեր ունի կասկածի տակ դնելու հարցի, նշման կամ ստորագրության իսկությունը կամ թարգմանության ճշտությունը՝ դեպքից կախված:

Կանոն 6

Հայտի վերաբերյալ ժամկետային սահմանափակումները՝ 6-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն

1) [Ժամկետային սահմանափակումները՝ 6-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն] Հաշվի առնելով 2-րդ և 3-րդ կետերը՝ 6-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերություններում նշված ժամկետները կազմում են ոչ պակաս, քան երկու ամիս՝ 6-րդ հոդվածի 7-րդ պարբերությունում նշված ծանուցման ամսաթվից:

2) [Բացառություն ժամկետների վերաբերյալ՝ 6-րդ հոդվածի 8-րդ պարբերության համաձայն] Հաշվի առնելով 3-րդ կետը՝ եթե, 6-րդ հոդվածի 7-րդ պարբերության համաձայն, ծանուցումը չի արվել այն պատճառով, որ չեն ներկայացվել նշումներ, որոնք թույլ կտային գերատեսչությանը կապվել հայտատուի հետ, 6-րդ հոդվածի 8-րդ պարբերության մեջ նշված ժամկետը կազմում է ոչ պակաս, քան երեք ամիս այն ամսաթվից, որով գերատեսչությունն առաջին անգամ ստացել է 5-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» ենթակետում նշված մեկ կամ մի քանի բաղադրիչները:

3) [Ճամկետները՝ 6-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրին համապատասխան՝ հայտի ներկայացման համար տուրքի վճարման հետ կապված] Եթե, հայտի ներկայացման հետ կապված, չի վճարվել 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ նախատեսված որևէ տուրք, Պայմանավորվող կողմը կարող է, 6-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն, վճարման համար կիրառել նույնպիսի ժամկետներ՝ ներառյալ նաև ուշ վճարումը, որոնք Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրով կիրառելի են ներկայացման միջազգային տուրքերի առնչությամբ:

Գանձ 7

*Մանրամասներ ներկայացուցչության վերաբերյալ՝
7-րդ հոդվածի համաձայն*

1) [Այլ ընթացակարգեր՝ 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության «ա» կետի iii ենթակետի համաձայն] 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության «ա» կետի iii ենթակետում նշված այլ ընթացակարգերը, որոնց վերաբերյալ Պայմանավորվող կողմը չի կարող պահանջել ներկայացուցչի նշանակում, ներառում են.

- i) Ավելի վաղ ներկայացված հայտի պատճենի ներկայացումը՝ 2-րդ կանոնի 4-րդ կետի համաձայն,
- ii) նախորդող հայտի պատճենի ներկայացումը՝ 2-րդ կանոնի 5-րդ կետի «բ» ենթակետի համաձայն:

2) [Ներկայացուցչի նշանակումը՝ 7-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն] ա) Պայմանավորվող կողմն ընդունում է, որ ներկայացուցիչ նշանակելու մասին փաստաթուղթը ներկայացվի գերատեսչություն.

- i) առանձին տեղեկատվությամբ (այսուհետ՝ լիազորագիր)՝ ստորագրված հայտատուի, իրավատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի կողմից, և նշելով ներկայացուցչի անունը ու հասցեն, կամ՝ հայտատուի ընտրությամբ.
- ii) 6-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված հայտի ձևանմուշով, որը ստորագրված է հայտատուի կողմից:

բ) Մեկ լիազորագիրը բավարար է նույնիսկ այն դեպքում, եթե այն վերաբերում է նույն անձի մի քանի հայտերին կամ արտոնագրերին կամ նույն անձի մեկ կամ մի քանի հայտերին և մեկ կամ մի քանի արտոնագրերին՝ պայմանով, որ խնդրո առարկա բոլոր հայտերն ու արտոնագրերը նշված լինեն մեկ լիազորագրում: Մեկ լիազորագիրը բավարար է նաև, եթե այն, հաշվի առնելով նշանակող անձի բացառությունները, վերաբերում է այդ անձի՝ գոյություն ունեցող և հետագա բոլոր հայտերին ու արտոնագրերին: Այն դեպքում, եթե այդ մեկ լիազորագիրը տրվում է թղթի վրա կամ գերատեսչության կողմից թույլատրվող այլ եղանակով, գերատեսչությունը կարող է պահանջել, որ յուրաքանչյուր հայտի և արտոնագրի համար, որին այն վերաբերում է, ներկայացվի դրա առանձին պատճենը:

3) [Լիազորագրի թարգմանությունը] Այն դեպքում, եթե լիազորագիրը ներկայացված չէ գերատեսչության համար ընդունելի լեզվով, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ դրան կցվի նաև թարգմանությունը:

4) [Փաստեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել գերատեսչություն ներկայացնել փաստեր միայն այն դեպքում, եթե գերատեսչությունը հիմքեր ունի կասկածի տակ դնելու 2-րդ կետի «ա» ենթակետում նշված ցանկացած տեղեկատվության մեջ պարունակվող նշումների իսկությունը:

5) [Ճամկետները՝ 7-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ պարբերությունների համաձայն] Հաշվի առնելով 6-րդ կետը՝ 7-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ պարբերություններում նշված ժամկետները կազմում են ոչ պակաս, քան երկու ամիս՝ 7-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում նշված ծանուցման ամսաթվից հետո:

6) [Բացառություն ժամկետի վերաբերյալ՝ 7-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն] Եթե 7-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում նշված ծանուցումը չի կատարվել այն պատճառով, որ չեն ներկայացվել նշումներ, որոնք գերատեսչությանը թույլ կտային կապվել հայտատուի, իրավատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի հետ, ապա 7-րդ հոդվածի 6-րդ պարբերությունում նշված ժամկետը կազմում է ոչ պակաս, քան երեք ամիս այն ամսաթվից հետո, որով սկսվել է 7-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում նշված գործընթացը:

Գանձ 8

Տեղեկատվության ներկայացումը՝ 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն

1) [Թղթի վրա ներկայացված տեղեկատվություն] ա) 2005 թ. հունիսի 2-ից հետո Պայմանավորվող ցանկացած կողմ, հաշվի առնելով 5-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և 8-րդ հոդվածի 1-ին պարբերության «դ» կետը, կարող է բացառել տեղեկատվության ներկայացումը թղթի վրա կամ կարող է շարունակել թույլատրել տեղեկատվության ներկայացումը թղթի վրա: Մինչև այդ ամսաթիվը Պայմանավորվող բոլոր պետությունները թույլատրում են տեղեկատվության ներկայացումը թղթի վրա:

բ) Հաշվի առնելով 8-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը և «գ» ենթակետը՝ Պայմանավորվող կողմը կարող է

սահմանել թղթի վրա ներկայացվող տեղեկատվության ձևանմուշների վերաբերյալ պահանջներ:

զ) Եթե Պայմանավորվող կողմը թույլատրում է տեղեկատվության ներկայացումը թղթի վրա, գերատեսչությունը պետք է թույլատրի տեղեկատվության ներկայացումը թղթի վրա՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի՝ թղթի վրա տեղեկատվություն ներկայացնելու ձևանմուշի վերաբերյալ պահանջներին համապատասխան:

դ) Չնայած «ա» ենթակետին՝ եթե թղթի վրա տեղեկատվության ստացումը կամ մշակումը դրա բնույթի կամ չափի բերումով գործնականում նպաստակահարմար չէ, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել այդ տեղեկատվության ներկայացումն այլ ձևով կամ փոխանցման այլ միջոցներով:

2) [*Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով ներկայացված տեղեկատվություն*]

ա) Եթե Պայմանավորվող կողմը թույլատրում է իր գերատեսչություն որոշակի լեզվով տեղեկատվություն ներկայացնել Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով, ներառյալ տեղեկատվության ներկայացումը հեռագրի, հեռատիպի, ֆաքսի կամ փոխանցման նմանատիպ այլ միջոցներով, և եթե Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ներքո առկա են տվյալ Պայմանավորվող կողմի նկատմամբ կիրառելի պահանջներ Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով այդ լեզվով ներկայացվող տեղեկատվության կապակցությամբ, ապա գերատեսչությունը թույլատրում է տեղեկատվության ներկայացումը նշված լեզվով, Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով՝ այդ պահանջներին համապատասխան:

բ) Պայմանավորվող կողմը, որը թույլատրում է իր գերատեսչություն տեղեկատվություն ներկայացնել Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով, ծանուցում է Միջազգային բյուրոյին տեղեկատվությունը այդ կերպով ներկայացնելու վերաբերյալ իր օրենսդրությամբ նախատեսված պահանջների մասին: Ցանկացած այդպիսի ծանուցում Միջազգային բյուրոյի կողմից հրապարակվում է այն լեզվով, որով այդ ծանուցումը կատարվել է, և այն լեզուներով, որոնցով հաստատվել են Պայմանագրի բնօրինակ և պաշտոնական տեքստերը՝ 25-րդ հոդվածի համաձայն:

զ) Եթե, «ա» ենթակետի համաձայն, Պայմանավորվող կողմը թույլատրում է տեղեկատվության ներկայացումը հեռագրի, հեռատիպի, ֆաքսի կամ փոխանցման այլ նմանատիպ միջոցներով, նա կարող է պահանջել, որ այդպիսի միջոցներով փոխանցված ցանկացած փաստաթղթի բնօրինակը՝ ավելի վաղ կատարված փոխանցումը հաստատող կից նամակով, ներկայացվի գերատեսչություն թղթի վրա ոչ պակաս, քան փոխանցման ամսաթվից մեկ ամիս հետո:

3) [*Թղթի վրա ներկայացված տեղեկատվության պատճենները Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով*] ա) Եթե Պայմանավորվող կողմը թույլատրում է թղթի վրա գերատեսչության համար ընդունելի լեզվով ներկայացված տեղեկատվության պատճենների ներկայացումը Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով, և եթե Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ներքո առկա են տվյալ Պայմանավորվող կողմի նկատմամբ կիրառելի պահանջներ այդ կերպով ներկայացվող տեղեկատվության պատճենների կապակցությամբ, գերատեսչությունը թույլատրում է տեղեկատվության պատճենների ներկայացումն Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով՝ այդ պահանջներին համապատասխան:

բ) Համապատասխան փոփոխությունները հաշվի առնելով՝ 2-րդ կետի «բ» ենթակետը կիրառվում է թղթի վրա ներկայացված տեղեկատվության՝ Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով ներկայացված պատճենների նկատմամբ:

Կանոն 9

*Մանրամասներ ստորագրության վերաբերյալ՝
8-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն*

1) [*Ստորագրությանը զուգակցվող նշումներ*] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ ստորագրող ֆիզիկական անձի ստորագրությունը զուգակցվի.

i) այդ անձի ազգանվան, անվան և հայրանվան կամ, այդ անձի ընտրությամբ, տվյալ անձի կողմից սովորաբար գործածվող անվան կամ անունների տառերով նշումով,

ii) նշումով, թե որպես ով է այդ անձը ստորագրել, եթե դա ակնհայտ չէ տեղեկատվության ընթերցումից:

2) [*Ստորագրության ամսաթիվը*] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ ստորագրությունը զուգակցվի ստորագրման ամսաթվի մասին նշումով: Եթե նման նշում է պահանջվում, բայց այն չի ներկայացվում, ստորագրության ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, որով գերատեսչությունն ստացել է ստորագրված տեղեկատվությունը կամ, եթե այդ թույլատրում է Պայմանավորվող կողմը, ավելի վաղ ամսաթիվ:

3) [Թղթի վրա տեղեկատվության ստորագրությունը] Եթե Պայմանավորվող կողմի գերատեսչությանն ուղղված տեղեկատվությունը թղթի վրա է, և պահանջվում է ստորագրություն, այդ Պայմանավորվող կողմը

I) ընդունում է ձեռագիր ստորագրությունը՝ հաշվի առնելով iii ենթակետը,

II) կարող է թույլատրել ձեռագիր ստորագրության փոխարեն օգտագործել ստորագրության այլ ձևեր, ինչպիսիք են ստորագրությամբ արտատպվածքը կամ դրոշմը կամ կնիքի կամ ստվերագծային ծածկագրի (շտրիխ կոդ) օգտագործումը,

III) կարող է պահանջել կնիքի օգտագործում ձեռագիր ստորագրության փոխարեն, եթե տեղեկատվություն ստորագրող ֆիզիկական անձը Պայմանավորվող կողմի քաղաքացի է, և այդ անձի հասցեն գտնվում է նրա տարածքում, կամ եթե իրավաբանական անձ է, որի անունից ստորագրվում է տեղեկատվությունը, հիմնադրված է նրա օրենսդրությանը համապատասխան, ունի գտնվելու վայր կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպություն նրա տարածքում:

4) [Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով ներկայացված տեղեկատվության ստորագրումը գրաֆիկական պատկերի միջոցով] Եթե Պայմանավորվող կողմը թույլատրում է տեղեկատվություն ներկայացնել Էլեկտրոնային ձևով կամ փոխանցման էլեկտրոնային միջոցներով, նա համարում է այդպիսի տեղեկատվությունը ստորագրված, եթե Պայմանավորվող այդ կողմի գերատեսչությունում ստացված տեղեկատվության վրա հայտնվում է Պայմանավորվող այդ կողմի համար ընդունելի ստորագրության գրաֆիկական պատկերը՝ 3-րդ կետի համաձայն:

5) [Էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկատվության ստորագրությունը՝ առանց ստորագրության գրաֆիկական պատկերի ի հայտ գալու] ա) Եթե Պայմանավորվող կողմը թույլատրում է տեղեկատվություն ներկայացնել Էլեկտրոնային ձևով, և Պայմանավորվող այդ կողմի համար ընդունելի ստորագրության գրաֆիկական պատկերը, 3-րդ կետի համաձայն, չի երևում Պայմանավորվող այդ կողմի գերատեսչությունում ստացված տեղեկատվության վրա, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ տեղեկատվությունը ստորագրված լինի ստորագրության էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ, ինչպես նախատեսվել է Պայմանավորվող այդ կողմը:

բ) Չնայած «ա» ենթակետին, եթե Պայմանավորվող կողմը թույլատրում է տեղեկություններ ներկայացնել Էլեկտրոնային ձևով, որոշակի լեզվով, և առկա են Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրով նախատեսված՝ Պայմանավորվող այդ կողմի նկատմամբ կիրառելի պահանջներ էլեկտրոնային ձևով այդ լեզվով ներկայացված տեղեկատվության ստորագրությունների վերաբերյալ, որոնց վրա չի երևում ստորագրության գրաֆիկական պատկերը, Պայմանավորվող այդ կողմի գերատեսչությունն ընդունում է էլեկտրոնային ձևով ցանկացած ստորագրություն՝ այդ պահանջներին համապատասխան:

գ) 8-րդ կանոնի 2-րդ կետի «բ» ենթակետը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

6) [Բացառություն ստորագրության հավաստագրման վերաբերյալ՝ 8-րդ հոդվածի 4-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 5-րդ կետում նշված ցանկացած ստորագրություն հաստատվի էլեկտրոնային ստորագրությունների հաստատման այն գործընթացով, որը կնշի Պայմանավորվող այդ կողմը:

Կանոն 10

*Մանրամասներ նշումների վերաբերյալ՝
8-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն*

1) [Նշումներ՝ 8-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն] ա) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ ցանկացած տեղեկատվության մեջ նշվեն՝

i) հայտատուի, իրավատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի անունը և հասցեն,

ii) հայտի կամ արտոնագրի համարը, որին դա վերաբերում է,

iii) եթե հայտատուն, իրավատերը կամ շահագրգիռ այլ անձը գրանցված են գերատեսչությունում՝ գրանցման համարը կամ այլ նշում:

բ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ ներկայացուցչի կողմից գերատեսչությունում գործընթացների նպատակով ներկայացվող ցանկացած տեղեկատվություն պարունակի.

i) ներկայացուցչի անունն ու հասցեն,

ii) հղում լիազորագրին կամ այլ տեղեկատվություն, որում նշվում է կամ նշվել է այդ ներկայացուցչի նշանակման մասին, և որի հիման վրա գործում է տվյալ ներկայացուցիչը,

iii) եթե ներկայացուցիչը գրանցված է գերատեսչությունում՝ գրանցման համարը կամ այլ նշում:

2) [Հասցե՝ նամակագրության համար և հասցե՝ իրավաբանական փաստաթղթեր հանձնելու համար] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության i ենթակետում նշված՝ նամակագրության համար հասցեն և 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության ii ենթակետում նշված՝ իրավաբանական փաստաթղթեր հանձնելու համար հասցեն գտնվեն Պայմանավորվող այդ կողմի նախատեսած տարածքում:

3) [Հասցեն, եթե ներկայացուցիչ չի նշանակվել] Եթե ներկայացուցիչ չի նշանակվել, և հայտատուն, իրավատերը կամ շահագրգիռ այլ անձը որպես իր հասցե ներկայացրել է հասցե Պայմանավորվող կողմի 2-րդ կետի համաձայն նախատեսված տարածքում, Պայմանավորվող այդ կողմը համարում է այդ հասցեն 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության i ենթակետում նշված նամակագրության համար հասցե կամ 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության ii ենթակետում նշված՝ իրավաբանական փաստաթղթեր հանձնելու համար հասցե, ինչպես պահանջում է Պայմանավորվող կողմը, եթե միայն հայտատուն, իրավատերը կամ շահագրգիռ այլ անձը հստակ չի նշել այլ հասցե՝ 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն:

4) [Հասցեն, եթե ներկայացուցիչ է նշանակվել] Եթե ներկայացուցիչ է նշանակվել, Պայմանավորվող կողմը համարում է այդ ներկայացուցչի հասցեն 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության i ենթակետում նշված նամակագրության համար հասցե կամ 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության ii ենթակետում նշված՝ իրավաբանական փաստաթղթեր հանձնելու համար հասցե, ինչպես պահանջում է Պայմանավորվող կողմը, եթե միայն հայտատուն, իրավատերը կամ շահագրգիռ այլ անձը հստակ չի նշել այլ հասցե՝ 8-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն:

5) [Պատժամիջոցներ՝ պահանջները չկատարելու համար՝ 8-րդ հոդվածի 8-րդ պարբերության համաձայն] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող նախատեսել հայտի մերժում՝ 1-ին պարբերության «ա» կետի iii ենթակետի և «բ» կետի iii ենթակետի համաձայն գրանցման համարը կամ որևէ այլ նշում ներկայացնելու ցանկացած պահանջ չկատարելու պատճառով:

Գանձն 11

*Տեղեկատվության վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ՝
8-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն*

1) [Ժամկետներ՝ 8-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունների համաձայն] Հաշվի առնելով 2-րդ կետը՝ 8-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերություններում նշված ժամկետները կազմում են ոչ պակաս, քան երկու ամիս 8-րդ հոդվածի 7-րդ պարբերության մեջ նշված ծանուցման ամսաթվից հետո:

2) [Բացառություն ժամկետի վերաբերյալ՝ 8-րդ հոդվածի 8-րդ պարբերության համաձայն] Եթե 8-րդ հոդվածի 7-րդ պարբերության համաձայն՝ ծանուցում չի կատարվել այն պատճառով, որ չեն ներկայացվել նշումներ, որոնք թույլ կտային գերատեսչությանը կապվել հայտատուի, իրավատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի հետ, 8-րդ (8) պարբերության մեջ նշված ժամկետը կազմում է ոչ պակաս, քան երեք ամիս այն ամսաթվից, որով գերատեսչությունն ստացել է 8-րդ հոդվածի 7-րդ պարբերության մեջ նշված տեղեկատվությունը:

Գանձն 12

*Ժամկետային սահմանափակումների վերաբերող մանրամասներ՝
11-րդ հոդվածի համաձայն*

1) [Պահանջներ՝ 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն] ա) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված միջնորդությունը

- i) ստորագրված լինի հայտատուի կամ իրավատիրոջ կողմից,
- ii) պարունակի նշում այն մասին, որ խնդրարկվում է ժամկետի երկարաձգում, և նշի տվյալ ժամկետը:
- բ) Եթե ժամկետի երկարաձգման մասին միջնորդությունը ներկայացվում է ժամկետի ավարտից հետո,

Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությունը ներկայացնելու հետ միաժամանակ կատարվեն բոլոր այն պահանջները, որոնց վերաբերյալ կիրառվում է համապատասխան գործողություն՝ կատարելու համար սահմանված ժամկետը:

2) [Ժամանակահատվածն ու ժամկետը 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն] ա) 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված ժամկետը երկարաձգելու ժամանակահատվածը կազմում է ոչ պակաս, քան երկու ամիս չերկարաձգված ժամկետի լրանալու ամսաթվից հետո:

բ) 11-րդ հոդվածի 1-ին պարբերության ii ենթակետում նշված ժամկետը լրանում է չերկարաձգված ժամկետը լրանալու թվականից ոչ վաղ, քան երկու ամիս հետո:

3) [Պահանջներ՝ 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության i ենթակետի համաձայն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշված միջնորդությունը

- i) ստորագրված լինի հայտատուի կամ իրավատիրոջ կողմից,
- ii) պարունակի նշում այն մասին, որ խնդրարկվում է ժամկետի չկատարման հետ կապված զիջում, և նշի տվյալ ժամկետը:
- 4) [Միջնորդություն ներկայացնելու համար ժամկետային սահմանափակումներ՝ 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության ii ենթակետի համաձայն] 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության ii ենթակետում նշված ժամկետը լրանում է ոչ շուտ, քան երկու ամիս անց գերատեսչության ծանուցումից հետո, որ հայտատուն կամ իրավատերը խախտել են գերատեսչության սահմանած ժամկետը:
- 5) [Բացառություններ՝ 11-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն] ա) Պայմանավորվող ոչ մի կողմից չի պահանջվում 11-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն կատարել.
 - i) երկրորդ կամ հաջորդող զիջում այն ժամկետի մասով, որի համար արդեն կատարվել է զիջում՝ 11-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն,
 - ii) զիջում՝ զիջումների մասին միջնորդություն ներկայացնելու մասով՝ 11-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն, կամ՝ վերականգնման համար միջնորդության մասով՝ 12-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն,
 - iii) զիջում պահպանության տուրքերի վճարման ժամկետի մասով,
 - iv) զիջում 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ պարբերություններում նշված ժամկետի մասով,
 - v) զիջում բողոքարկման պալատում կամ գերատեսչության շրջանակում հիմնադրված՝ վերաքննման այլ մարմնում գործողություն կատարելու համար սահմանված ժամկետի մասով,
 - vi) զիջում կողմերի միջև դատական վարույթներում գործողությունների ժամկետի մասով:
- բ) Պայմանավորվող ոչ մի կողմից, որն առավելագույն ժամկետ է նախատեսում գերատեսչությունում գործընթացների նկատմամբ բողոք պահանջների կատարման համար, չի պահանջվում, 11-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն, կատարել ժամկետային զիջումներ այդ գործընթացի՝ այդ առավելագույն ժամկետից դուրս գործողությունների համար:

Կանոն 13

Մանրամասներ գերատեսչության՝ պատշաճ միջոցներ ձեռնարկելը կամ չկանխատեսվածության փաստը հայտնաբերելուց հետո իրավունքների վերականգնման վերաբերյալ՝ 12-րդ հոդվածի համաձայն

- 1) [Պահանջներ՝ 12-րդ հոդվածի 1-ին պարբերության i ենթակետի համաձայն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 12-րդ հոդվածի 1-ին պարբերության i ենթակետում նշված միջնորդությունը ստորագրված լինի հայտատուի կամ իրավատիրոջ կողմից:
- 2) [Ժամկետային սահմանափակում՝ 12-րդ հոդվածի 1-ին պարբերության ii ենթակետի համաձայն] Միջնորդություն ներկայացնելու և 12-րդ հոդվածի 1-ին պարբերության ii ենթակետով նախատեսված պահանջները բավարարելու համար ժամկետը համարվում է հետևյալներից ավելի վաղ լրացող ժամկետը.
 - i) երկու ամսից ոչ պակաս՝ համապատասխան գործողություն կատարելու համար ժամկետը չպահպանելու պատճառները վերացնելու ամսաթվից,
 - ii) 12 ամսից ոչ պակաս՝ համապատասխան գործողություն կատարելու համար ժամկետը լրանալու ամսաթվից, կամ, եթե միջնորդությունը վերաբերում է պահպանման տուրքը չվճարելուն, 12 ամսից ոչ պակաս՝ Փարիզյան կոնվենցիայի 5bis հոդվածով նախատեսված արտոնյալ ժամկետը լրանալու ամսաթվից:
- 3) [Բացառություններ՝ 12-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն] 12-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշված բացառություններն իրենցից ներկայացնում են հետևյալ ժամկետները չպահպանելը.
 - i) ժամկետ բողոքարկման պալատում կամ գերատեսչության շրջանակներում հիմնադրված վերաքննիչ այլ մարմնում գործողություն կատարելու համար,
 - ii) ժամկետ զիջման համար միջնորդություն ներկայացնելու համար՝ 11-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն, կամ վերականգնման համար միջնորդություն ներկայացնելու համար՝ 12-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն,
 - iii) 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ պարբերություններում նշված ժամկետ,
 - iv) կողմերի միջև դատական վարույթներում գործողությունների համար ժամկետ:

Կանոն 14

Մանրամասներ՝ առաջնության խնդրարկման ուղղումների կամ լրացումների և առաջնության իրավունքի վերականգնման վերաբերյալ՝ 13-րդ հոդվածի համաձայն

- 1) [Բացառություն՝ 13-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն] Պայմանավորվող ոչ մի կողմ պարտավոր չէ նախատեսել առաջնության խնդրանքի ուղղում կամ լրացում՝ 13-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն, եթե 13-րդ հոդվածի 1-ին պարբերության i ենթակետում նշված միջնորդությունը ստացվել է այն բանից հետո, երբ հայտատուն

միջնորդություն է ներկայացրել վաղաժամկետ հրապարակման կամ հայտի՝ արագացված կամ շտապ մշակման վերաբերյալ՝ պայմանով, որ այդ միջնորդությունը՝ վաղաժամկետ հրապարակման կամ արագացված կամ շտապ մշակման վերաբերյալ, հետ չի վերցվել նախքան հայտի հրապարակման տեխնիկական նախապատրաստության ավարտը:

2) [Պահանջներ՝ 13-րդ հոդվածի 1-ին պարբերության i ենթակետի համաձայն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 13-րդ հոդվածի 1-ին պարբերության i ենթակետում նշված միջնորդությունը ստորագրված լինի հայտատուի կողմից:

3) [Ժամկետը՝ 13-րդ հոդվածի 1-ին պարբերության ii ենթակետի համաձայն] 13-րդ հոդվածի 1-ին պարբերության ii ենթակետում նշված ժամկետը չպետք է պակաս լինի, քան Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրով կիրառելի ժամկետը միջազգային հայտ ներկայացնելուց հետո առաջնության խնդրարկման համար:

4) [Ժամկետները՝ 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն] ա) 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության ներածական մասում նշված ժամկետը լրանում է ոչ պակաս, քան երկու ամիս հետո այն ամսաթվից, որով լրանում է առաջնության ժամանակահատվածը:

բ) 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության ii ենթակետում նշված ժամկետը հանդիսանում է «ա» ենթակետի համաձայն կիրառելի ժամկետ կամ այն ժամկետը, երբ ավարտվում են հաջորդող հայտի հրապարակման տեխնիկական նախապատրաստությունները՝ կախված այն բանից, թե դրանցից որն է ավելի վաղ լրանում:

5) [Պահանջներ՝ 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության ii ենթակետի համաձայն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության ii ենթակետում նշված միջնորդությունը՝

- i) ստորագրված լինի հայտատուի կողմից, և
- ii) գուգակցվի խնդրարկվող առաջնության մասին դիմումով, եթե հայտը չի խնդրարկում ավելի վաղ ներկայացված հայտի առաջնությունը:

6) [Պահանջներ՝ 13-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն] ա) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ 13-րդ հոդվածի 3-րդ պարբերության i ենթակետում նշված միջնորդությունը՝

- i) ստորագրված լինի հայտատուի կողմից, և
- ii) նշի այն գերատեսչությունը, ուր ներկայացվել են ավելի վաղ ներկայացված հայտի պատճենի համար միջնորդությունը և այդ միջնորդության ամսաթիվը:

բ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ՝

- i) 13-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում նշված միջնորդության հետ հայտարարություն կամ այլ փաստեր ներկայացվեն գերատեսչություն վերջինիս կողմից սահմանված ժամկետում,
- ii) 13-րդ հոդվածի 3-րդ պարբերության iv ենթակետում նշված ավելի վաղ ներկայացված հայտի պատճենը ներկայացվի գերատեսչություն այն ժամկետի ընթացքում, որը կազմում է ոչ պակաս, քան մեկ ամիս այն ամսաթվից, որով գերատեսչությունը, ուր ավելի վաղ ներկայացվել է հայտը, հայտատուին է ներկայացրել այդ պատճենը:

7) [Ժամկետը՝ 13-րդ հոդվածի 3-րդ պարբերության iii ենթակետի համաձայն] 13-րդ հոդվածի 3-րդ պարբերության iii ենթակետում նշված ժամկետը ավարտվում է 4-րդ կանոնի 1-ին կետով նախատեսված ժամկետի ավարտից երկու ամիս առաջ:

Կանոն 15

Միջնորդություն՝ անվան կամ հասցեի փոփոխությունն արձանագրելու համար

1) [Միջնորդություն] Եթե հայտատուն կամ իրավատերը նույն անձն է մնացել, բայց փոխվել են նրա անունը կամ հասցեն, Պայմանավորվող կողմը թույլատրում է, որ անվան կամ հասցեի փոփոխությունն արձանագրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացվի հայտատուի կամ իրավատիրոջ կողմից ստորագրված տեղեկատվությամբ և պարունակի հետևյալ նշումները.

- i) նշում այն մասին, որ խնդրարկվում է արձանագրել անվան կամ հասցեի փոփոխությունը,
- ii) համապատասխան հայտի կամ արտոնագրի համարը,
- iii) արձանագրվելիք փոփոխությունը,
- iv) նախքան փոփոխությունը՝ հայտատուի կամ իրավատիրոջ անունը և հասցեն:

2) [Տուրքեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 1-ին կետում նշված միջնորդության նկատմամբ տուրքերի վճարում:

3) [Մեկ միջնորդություն] ա) Մեկ միջնորդությունը բավարար է, եթե փոփոխությունը վերաբերում է հայտատուի կամ իրավաստիրոջ ինչպես անվանը, այնպես էլ հասցեին:

բ) Մեկ միջնորդությունը բավարար է, եթե միջնորդությունը վերաբերում է նույն անձի մի քանի հայտերին կամ արտոնագրերին կամ նույն անձի մեկ կամ մի քանի հայտերին ու արտոնագրերին՝ պայմանով, որ միջնորդության մեջ նշված են համապատասխան բոլոր հայտերի կամ արտոնագրերի համարները: Եթե նման մեկ միջնորդությունը ներկայացվել է թղթի վրա կամ գերատեսչության կողմից թույլատրված ցանկացած այլ միջոցով, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ յուրաքանչյուր հայտի և արտոնագրի համար, որին վերաբերում է միջնորդությունը, ներկայացված լինի դրա առանձին պատճենը:

4) [Փաստեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել գերատեսչություն փաստեր ներկայացնել միայն այն դեպքում, եթե գերատեսչությունը հիմքեր ունի կասկածի տակ դնելու միջնորդության մեջ պարունակվող ցանկացած նշման իսկությունը:

5) [Այլ պահանջների արգելանք] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել 1-ին կետում նշված միջնորդության վերաբերյալ 1-4-րդ կետերում նշվածներից բացի այլ պահանջների կատարում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ սույն Կանոնակարգով: Մասնավորապես, չի կարող պահանջվել, որ որևէ հավաստագիր ներկայացվի փոփոխությունների վերաբերյալ:

6) [Ծանուցում] Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-4-րդ կետերով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չի բավարարվում, գերատեսչությունը այդ մասին ծանուցում է հայտատուին կամ իրավաստիրոջը՝ հնարավորություն տալով կատարելու ցանկացած այդպիսի պահանջ և ներկայացնելու դիտողություններ ծանուցման ամսաթվից ոչ պակաս, քան երկու ամսվա ընթացքում:

7) [Պահանջներ չկատարելը] ա) Եթե Պայմանավորվող կողմի՝ 1-4-րդ կետերով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չի բավարարվում «բ» կետով սահմանված ժամկետում, Պայմանավորվող կողմը կարող է նախատեսել, որ միջնորդությունը մերժվի, բայց ոչ ավելի խիստ պատժամիջոցներ:

- բ) «ա» կետում նշված ժամկետը կազմում է՝
 - i) հաշվի առնելով ի ենթակետը՝ ոչ պակաս, քան երկու ամիս ծանուցման ամսաթվից,
 - ii) եթե չեն ներկայացվել նշումներ, որոնք թույլ կտային գերատեսչությանը կապվել 1-ին կետում նշված միջնորդությունը ներկայացրած անձի հետ՝ ոչ պակաս, քան երեք ամիս այն ամսաթվից, որով գերատեսչությունն ստացել է այդ միջնորդությունը:

8) [Ներկայացուցչի անվան կամ հասցեի փոփոխություն կամ նամակագրության համար հասցեի կամ իրավաբանական փաստաթղթեր ներկայացնելու համար հասցեի փոփոխություն] Համապատասխան փոփոխությունները հաշվի առնելով՝ 1-7-րդ կետերը կիրառվում են ներկայացուցչի անվան կամ հասցեի կամ նամակագրության համար հասցեի կամ իրավաբանական փաստաթղթեր ներկայացնելու համար հասցեի ցանկացած փոփոխության նկատմամբ:

Կանոն 16

Միջնորդություն՝ հայտատուի կամ իրավաստիրոջ փոփոխությունն արձանագրելու համար

1) [Միջնորդություն հայտատուի կամ իրավաստիրոջ փոփոխությունն արձանագրելու համար] ա) Եթե առկա է հայտատուի կամ իրավաստիրոջ փոփոխություն, Պայմանավորվող կողմն ընդունում է, որ փոփոխության մասին արձանագրելու միջնորդությունը ներկայացված լինի հայտատուի կամ իրավաստիրոջ, կամ նոր հայտատուի կամ նոր իրավաստիրոջ կողմից ստորագրված տեղեկատվությամբ և պարունակի հետևյալ նշումները.

- i) նշում այն մասին, որ պահանջվում է արձանագրել հայտատուի կամ իրավաստիրոջ փոփոխությունը,
 - ii) համապատասխան հայտի կամ արտոնագրի համարը,
 - iii) հայտատուի կամ իրավաստիրոջ անունն ու հասցեն,
 - iv) նոր հայտատուի կամ նոր իրավաստիրոջ անունն ու հասցեն,
 - v) հայտատուի կամ իրավաստիրոջ անձի փոփոխության ամսաթիվը,
 - vi) այն պետության անվանումը, որի քաղաքացին է նոր հայտատուն կամ նոր իրավատերը. եթե նա որևէ պետության քաղաքացի է՝ այն պետության անվանումը, որտեղ նոր հայտատուն կամ նոր իրավատերն ունի բնակության վայր՝ այդպիսին առկա լինելու դեպքում, և այն պետության անվանումը, որտեղ նոր հայտատուն կամ նոր իրավատերն ունի իրական և գործող արտադրական կամ առևտրային ձեռնարկություն, եթե այդպիսին առկա է,
 - vii) պահանջվող փոփոխության համար հիմքերը:
- բ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությունը պարունակի՝

- i) հայտարարություն այն մասին, որ միջնորդության մեջ պարունակվող տեղեկությունները ճիշտ են և հավաստի,
- ii) տեղեկություններ այդ Պայմանավորվող կողմի ցանկացած պետական շահի վերաբերյալ:

2) [Հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխության հիմնավորման փաստաթղթեր] ա) Եթե հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխությունը բխում է պայմանագրից, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությունը պարունակի տեղեկություններ պայմանագրի գրանցման վերաբերյալ, եթե գրանցումը պարտադիր է կիրառելի օրենսդրությանը համապատասխան, և որպեսզի միջնորդող կողմի ընտրությամբ՝ միջնորդությանը կցված լինի հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը.

i) պայմանագրի պատճենը, ընդ որում՝ կարող է պահանջվել, որ այդպիսի պատճենը վավերացված լինի՝ իբրև բնօրինակ պայմանագրին համապատասխանող, միջնորդող կողմի ընտրությամբ, պետական նոտարի կողմից կամ ցանկացած պետական իրավասու այլ մարմնի կողմից կամ, եթե թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, գերատեսչության հետ գործեր վարելու իրավունք ունեցող ներկայացուցչի կողմից,

ii) քաղվածք փոփոխությունն արտացոլող պայմանագրից, ընդ որում՝ կարող է պահանջվել, որ այդ քաղվածքը հաստատված լինի որպես ճիշտ քաղվածք պայմանագրից՝ միջնորդող կողմի ընտրությամբ, պետական նոտարի կողմից կամ ցանկացած պետական իրավասու այլ մարմնի կողմից կամ, եթե թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, գերատեսչության հետ գործեր վարելու իրավունք ունեցող ներկայացուցչի կողմից,

iii) չհաստատված վկայական սեփականության իրավունքը պայմանագրով փոխանցելու վերաբերյալ, որը կազմված է փոխանցման մասին վկայագրի վերաբերյալ միջազգային տիպային ձևանմուշով նախատեսված բովանդակությամբ և ստորագրված է հայտատուի և նոր հայտատուի կամ իրավատիրոջ և նոր իրավատիրոջ կողմից:

բ) Եթե հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխությունը միաձուլման կամ իրավաբանական անձի վերակազմակերպման կամ բաժանման արդյունք է, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությանը կցվի այն փաստաթղթի պատճենը, որը կազմվել է իրավասու մարմնի կողմից և փաստում է միաձուլումը կամ իրավաբանական անձի վերակազմակերպումը կամ բաժանումը և համապատասխան իրավունքների ցանկացած բաշխումը, օրինակ՝ առևտրային գրանցամատյանից քաղվածքի պատճենը: Պայմանավորվող կողմը կարող է նաև պահանջել, որ պատճենը հաստատված լինի որպես բնօրինակին համապատասխանող փաստաթուղթ, միջնորդող կողմի ընտրությամբ՝ փաստաթուղթը թողարկող մարմնի կողմից կամ պետական նոտարի կողմից կամ պետական լիազոր այլ մարմնի կողմից կամ, եթե դա թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, գերատեսչության հետ գործեր վարելու իրավունք ունեցող ներկայացուցչի կողմից:

գ) Եթե հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխությունը չի բխում պայմանագրից, միաձուլումից կամ իրավաբանական անձի վերակազմակերպումից կամ բաժանումից, այլ առաջացել է այլ պատճառներով, օրինակ՝ օրենքի կիրառման կամ դատարանի վճռի արդյունքում, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությանը կցվի փոփոխությունը փաստող փաստաթղթի պատճենը: Պայմանավորվող կողմը կարող է նաև պահանջել, որ պատճենը հաստատված լինի որպես բնօրինակին համապատասխանող փաստաթուղթ, միջնորդող կողմի ընտրությամբ՝ փաստաթուղթը թողարկող մարմնի կողմից կամ պետական նոտարի կողմից կամ պետական լիազոր այլ մարմնի կողմից կամ, եթե դա թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, գերատեսչության հետ գործեր վարելու իրավունք ունեցող ներկայացուցչի կողմից:

դ) Մեկ կամ մի քանի անձանց փոփոխության դեպքում, բայց ոչ բոլոր համահայտատուների կամ համաիրավատերերի դեպքում Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ գերատեսչություն ներկայացվի ցանկացած փոփոխության վերաբերյալ այն համահայտատուի կամ այն համաիրավատիրոջ համաձայնության վերաբերյալ փաստեր, որոնց վրա փոփոխությունը չի տարածվում:

3) [Թարգմանություն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 2-րդ կետի համաձայն ներկայացված ցանկացած փաստաթղթի թարգմանություն, որը չի ներկայացվել գերատեսչության համար ընդունելի լեզվով:

4) [Տուրքեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 1-ին կետով սահմանված միջնորդության նկատմամբ տուրքերի վճարում:

5) [Մեկ միջնորդություն] Մեկ միջնորդությունը բավարար է, եթե անգամ փոփոխությունը վերաբերում է նույն անձի մի քանի հայտերին կամ արտոնագրերին կամ նույն անձի մեկ կամ մի քանի հայտերին կամ մեկ կամ մի քանի արտոնագրերին՝ պայմանով, որ հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխությունը միատեսակ է բոլոր համապատասխան հայտերի կամ արտոնագրերի համար, և միջնորդությունում նշված են բոլոր համապատասխան հայտերի կամ արտոնագրերի համարները: Եթե այդ մեկ միջնորդությունը ներկայացվում է թղթի վրա կամ գերատեսչության կողմից թույլատրելի ցանկացած այլ միջոցով, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ յուրաքանչյուր հայտի կամ արտոնագրի համար, որին վերաբերում է միջնորդությունը, ներկայացվի դրա առանձին պատճենը:

6) [Փաստեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ փաստեր կամ, 2-րդ կետի դեպքում, լրացուցիչ փաստեր ներկայացվեն գերատեսչություն միայն այն դեպքում, եթե այդ գերատեսչությունը ողջամիտ հիմքեր ունի կասկածի տակ դնելու միջնորդությունում կամ սույն կանոնում նշված ցանկացած փաստաթղթում պարունակվող ցանկացած նշման իսկությունը կամ 3-րդ կետում նշված ցանկացած թարգմանության ճշտությունը:

7) [Սյլ պահանջների արգելանք] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել, որ սույն կանոնում նշված միջնորդության առնչությամբ կատարվեն, 1-6-րդ կետերում նշվածներից բացի, այլ ձևական պահանջներ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ սույն Կանոնակարգով:

8) [Ծանուցում, պահանջներ չկատարելը] Հաշվի առնելով համապատասխան փոփոխությունները՝ 15-րդ կանոնի 6-րդ և 7-րդ կետերը կիրառվում են, եթե 1-5-րդ կետերով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չեն բավարարվում, կամ եթե պահանջվում են փաստեր կամ լրացուցիչ փաստեր՝ 6-րդ կետի համաձայն:

9) [Բացառություն հեղինակության վերաբերյալ] Պայմանավորվող կողմը կարող է բացառել այս կանոնի կիրառումը հեղինակությանն առնչվող փոփոխությունների վերաբերյալ: Հեղինակ լինելը որոշվում է կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

Կանոն 17

Միջնորդություն՝ լիցենզիայի կամ գրավի իրավունքի մասին արձանագրելու համար

1) [Միջնորդություն լիցենզիայի մասին արձանագրելու համար] ա) Եթե, համաձայն կիրառելի օրենսդրության, կարելի է հայտի կամ արտոնագրի վերաբերյալ լիցենզիայի մասին գրանցում կատարել, Պայմանավորվող կողմն ընդունում է, որ այդ լիցենզիայի մասին գրանցում կատարելու համար միջնորդությունը ներկայացված լինի լիցենզատուի կամ լիցենզատուի կողմից ստորագրված տեղեկատվությամբ և պարունակի հետևյալ նշումները՝

- i) նշում, որ պահանջվում է լիցենզիայի մասին գրանցում կատարել,
- ii) համապատասխան հայտի կամ արտոնագրի համարը,
- iii) լիցենզատուի անունն ու հասցեն,
- iv) լիցենզատուի անունն ու հասցեն,
- v) նշում, թե ինչպիսին է լիցենզիան՝ բացառիկ, թե ոչ բացառիկ,
- vi) այն պետության անվանումը, որի քաղաքացին է լիցենզառուն. եթե նա որևէ պետության քաղաքացի է՝ այն պետության անվանումը, որում լիցենզառուն ունի մշտական բնակավայր, եթե այդպիսին առկա է, և այն պետության անվանումը, որտեղ լիցենզառուն ունի իրական և գործող արտադրական կամ առևտրային ձեռնարկություն, եթե այդպիսին առկա է:

- բ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությունը պարունակի՝
 - i) հայտարարություն այն մասին, որ միջնորդությունում պարունակվող տեղեկությունները ճիշտ են և հավաստի,
 - ii) տեղեկություններ այդ Պայմանավորվող կողմի ցանկացած պետական շահի վերաբերյալ,
 - iii) լիցենզիայի գրանցմանը վերաբերող տեղեկություններ, եթե գրանցումը պարտադիր է՝ կիրառելի օրենսդրության համաձայն,
 - iv) լիցենզիայի ամսաթիվը և դրա տևողությունը:

2) [Լիցենզիայի համար հիմք հանդիսացող փաստաթղթեր] ա) Եթե լիցենզիան ազատ կնքված համաձայնագրի արդյունք է, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությանը, միջնորդող կողմի ընտրությամբ, կցվի հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը.

i) համաձայնագրի պատճենը, ընդ որում՝ կարող է պահանջվել, որ այդ պատճենը հաստատված լինի որպես համաձայնագրի բնօրինակին համապատասխանող փաստաթուղթ, միջնորդող կողմի ընտրությամբ՝ պետական նոտարի կամ պետական իրավասու այլ մարմնի կողմից կամ, եթե դա թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, գերատեսչության հետ գործեր վարելու իրավունք ունեցող ներկայացուցչի կողմից:

ii) Քաղվածք համաձայնագրից, որը բաղկացած է համաձայնագրի այն մասերից, որոնք ցույց են տալիս լիցենզավորված իրավունքները և դրանց շրջանակը, ընդ որում՝ կարող է պահանջվել, որ այդ քաղվածքը հաստատված լինի որպես համաձայնագրի իսկական քաղվածք, միջնորդող կողմի ընտրությամբ՝ պետական նոտարի կամ պետական իրավասու այլ մարմնի կողմից կամ, եթե դա թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, գերատեսչության հետ գործեր վարելու իրավունք ունեցող ներկայացուցչի կողմից:

բ) Եթե լիցենզիան ազատ կնքված համաձայնագրի արդյունք է, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ ցանկացած հայտատու, իրավատեր, բացառիկ լիցենզառու, համահայտատու, համաիրավատեր կամ բացառիկ

համալիցենզառու, որն այդ համաձայնագրի մասնակից չէ, տա իր համաձայնությունը այդ համաձայնագրի գրանցման վերաբերյալ՝ գերատեսչություն ներկայացված տեղեկատվությամբ:

զ) Եթե լիցենզիան ազատ կնքված համաձայնագրի արդյունք չէ, այլ, օրինակ՝ օրենքի կիրարկման կամ դատարանի վճռի արդյունք է, Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությանը կցվի լիցենզիայի առկայություն փաստող փաստաթղթի պատճենը: Պայմանավորվող կողմը կարող է նաև պահանջել, որ այդ պատճենը հաստատված լինի որպես բնօրինակ փաստաթղթին համապատասխանող, միջնորդող կողմի ընտրությամբ՝ պետական նոտարի կամ պետական իրավասու այլ մարմնի կողմից կամ, եթե դա թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, գերատեսչության հետ գործեր վարելու իրավունք ունեցող ներկայացուցչի կողմից:

3) [Թարգմանություն] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 2-րդ կետի համաձայն ներկայացված ցանկացած փաստաթղթի թարգմանություն, որը չի ներկայացվել գերատեսչության համար ընդունելի լեզվով:

4) [Տուրքեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 1-ին կետով սահմանված միջնորդության նկատմամբ տուրքերի վճարում:

5) [Մեկ միջնորդություն] Համապատասխան փոփոխությունները հաշվի առնելով՝ 16-րդ կանոնի 5-րդ կետը կիրառվում է լիցենզիայի մասին արձանագրելու համար միջնորդությունների նկատմամբ:

6) [Փաստեր] Համապատասխան փոփոխությունները հաշվի առնելով՝ 16-րդ կանոնի 6-րդ կետը կիրառվում է լիցենզիայի մասին արձանագրելու համար միջնորդությունների նկատմամբ:

7) [Այլ պահանջների արգելանք] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել, որ 1-ին կետում նշված միջնորդության առնչությամբ կատարվեն, 1-6-րդ կետերում նշվածներից բացի, այլ ձևական պահանջներ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ սույն Կանոնակարգով:

8) [Ծանուցում, պահանջներ չկատարելը] Հաշվի առնելով համապատասխան փոփոխությունները՝ 15-րդ կանոնի 6-րդ և 7-րդ կետերը կիրառվում են, եթե 1-5-րդ կետերով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չեն բավարարվում, կամ եթե պահանջվում են փաստեր կամ լրացուցիչ փաստեր՝ 6-րդ կետի համաձայն:

9) [Միջնորդություն գրավի իրավունքը գրանցելու համար կամ լիցենզիայի կամ գրավի իրավունքի մասին գրանցումը չեղյալ հայտարարելու համար] Համապատասխան փոփոխությունները հաշվի առնելով՝ 1-8-րդ կետերը կիրառվում են հետևյալ միջնորդությունների նկատմամբ.

- i) հայտի կամ արտոնագրի նկատմամբ՝ գրավի իրավունքը գրանցելու համար,
- ii) հայտի կամ արտոնագրի նկատմամբ՝ լիցենզիայի կամ գրավի իրավունքի գրանցումը չեղյալ հայտարարելու համար:

Կանոն 18

Միջնորդություն՝ սխալներն ուղղելու համար

1) [Միջնորդություն] ա) Եթե հայտը, արտոնագիրը կամ գերատեսչություն ներկայացված հայտի կամ արտոնագրի վերաբերյալ ցանկացած միջնորդություն պարունակում է որոնման կամ ըստ էության փորձաքննության հետ չկապված սխալ, որը գերատեսչությունը կարող է ուղղել կիրառելի օրենսդրությանը համապատասխան, գերատեսչությունն ընդունում է, որ միջնորդություն ներկայացվող՝ գերատեսչության փաստաթղթերում և հրապարակումներում այդ սխալն ուղղելու համար գերատեսչություն ներկայացված տեղեկատվությամբ, որն ստորագրված է հայտատուի կամ իրավաստիրոջ կողմից և պարունակում է հետևյալ նշումները.

- i) նշում այն մասին, որ պահանջվում է սխալի ուղղում,
- ii) համապատասխան հայտի կամ արտոնագրի համարը,
- iii) ուղղման ենթակա սխալը,
- iv) կատարվելիք ուղղումը,
- v) միջնորդող կողմի անունն ու հասցեն:

բ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությանը կցվի փոխարինող մասը կամ ուղղում պարունակող մասը կամ, եթե կիրառվում է 3-րդ կետը, այդ փոխարինող մասը կամ ուղղում պարունակող մասը յուրաքանչյուր հայտի և արտոնագրի համար, որին վերաբերում է միջնորդությունը:

գ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությունը զուգակցվի միջնորդող կողմի հայտարարությամբ այն մասին, որ սխալը դիտավորյալ չի կատարվել:

դ) Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ միջնորդությունը գուգակցվի միջնորդող կողմի հայտարարությամբ այն մասին, որ նշված միջնորդությունը ներկայացվել է առանց անհիմն ուշացման, կամ, Պայմանավորվող կողմի ընտրությամբ, որ այն ներկայացվել է առանց դիտավորյալ ուշացման՝ անմիջապես սխալը հայտնաբերելուց հետո:

2) [Տուրքեր] ա) Հաշվի առնելով «բ» ենթակետը՝ Պայմանավորվող կողմը կարող է պահանջել 1-ին կետի համաձայն՝ միջնորդության նկատմամբ տուրքերի վճարում:

բ) Գերատեսչությունն ուղղում է իր սխալները ի պաշտոնե կամ ըստ պահանջի՝ առանց տուրքեր գանձելու:

3) [Մեկ միջնորդություն] Հաշվի առնելով համապատասխան փոփոխությունները՝ 16-րդ կանոնի 5-րդ կետը կիրառվում է սխալներն ուղղելու վերաբերյալ միջնորդությունների նկատմամբ՝ պայմանով, որ սխալը և պահանջվող ուղղումը նույն են բոլոր համապատասխան հայտերի և արտոնագրերի համար:

4) [Փաստեր] Պայմանավորվող կողմը կարող է պահանջել, որ գերատեսչություն ներկայացվեն փաստեր՝ միջնորդությունը հիմնավորելու համար, միայն այն դեպքում, եթե գերատեսչությունը հիմքեր ունի ողջամիտ կասկածի տակ առնելու, որ ենթադրվող սխալը իրոք սխալ է, կամ եթե հիմքեր ունի կասկածի տակ առնելու սխալներն ուղղելու վերաբերյալ միջնորդության կապակցությամբ ներկայացված որևէ նյութի կամ փաստաթղթի իսկությունը:

5) [Այլ պահանջների արգելանք] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել, որ կատարվեն, 1-ին կետում նշված միջնորդության վերաբերյալ 1-4-րդ կետերով նախատեսված պահանջներից բացի, այլ ձևական պահանջներ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ սույն Կանոնակարգով:

6) [Ծանուցում, պահանջները չկատարելը] Հաշվի առնելով համապատասխան փոփոխությունները՝ 15-րդ կանոնի 6-րդ և 7-րդ կետերը կիրառվում են, եթե 1-3-րդ կետերով կիրառելի մեկ կամ մի քանի պահանջ չեն բավարարվում, կամ եթե պահանջվում են փաստեր՝ 4-րդ կետի համաձայն:

7) [Բացառություններ] ա) Պայմանավորվող կողմը կարող է բացառել սույն կանոնի կիրառումը հեղինակության մեջ փոփոխությունների նկատմամբ: Հեղինակություն հասկացությունը որոշվում է կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

բ) Պայմանավորվող կողմը կարող է բացառել սույն կանոնի կիրառումը ցանկացած սխալի նկատմամբ, որը կրկին արտոնագիր տալու գործընթացով պետք է ուղղվի Պայմանավորվող այդ կողմում:

Կանոն 19

Հայտի նույնականացման եղանակ՝ առանց հայտի համարի

1) [Նույնականացման եղանակը] Եթե անհրաժեշտ է նույնականացնել հայտը դրա համարով, բայց այդ համարը դեռ տրված չէ կամ հայտնի չէ տվյալ անձին կամ նրա ներկայացուցչին, հայտը համարվում է նույնականացված, եթե, այդ անձի ընտրությամբ, ներկայացված է հետևյալ տվյալներից որևէ մեկը.

- i) գերատեսչության կողմից տրված հայտի ժամանակավոր համարը, եթե այդպիսին առկա է,
- ii) հայտում եղած միջնորդության հատվածի պատճենը այն ամսաթվի հետ միասին, որով հայտն ուղարկվել է գերատեսչություն,
- iii) հայտատուի կամ նրա ներկայացուցչի կողմից հայտին տրված և հայտում նշված գործի համարը՝ հայտատուի անվան և հասցեի, գյուտի անվան և այն ամսաթվի հետ միասին, որով հայտն ուղարկվել է գերատեսչություն:

2) [Այլ պահանջների արգելանք] Պայմանավորվող ոչ մի կողմ չի կարող պահանջել, որ 1-ին կետում նշվածներից բացի՝ հայտի նույնականացման նպատակով ներկայացվեն նույնականացման այլ միջոցներ, եթե հայտի համարը դեռ տրված չէ կամ հայտնի չէ տվյալ անձին կամ նրա ներկայացուցչին:

Կանոն 20

Միջազգային տիպային ձևանմուշների հաստատում

1) [Միջազգային տիպային ձևանմուշներ] ա) 14-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» ենթակետի համաձայն՝ Ասամբլեան հաստատում է միջազգային տիպային ձևանմուշներ՝ 25-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված յուրաքանչյուր լեզվով.

- i) լիազորագրի,

- ii) անվան կամ հասցեի փոփոխության արձանագրման համար միջնորդության,
- iii) հայտատուի կամ իրավատիրոջ փոփոխության արձանագրման համար միջնորդության,
- iv) իրավունքների փոխանցման մասին վկայականի,
- v) լիցենզիայի մասին գրանցելու կամ գրանցումը չեղյալ հայտարարելու համար միջնորդության,
- vi) գրավի իրավունքի մասին գրանցում կատարելու կամ չեղյալ հայտարարելու համար միջնորդության,
- vii) սխալի ուղղման համար միջնորդության:

2) [3-րդ կանոնի 2-րդ կետի i ենթակետում նշված փոփոխություններ] Ասամբլեան հաստատում է Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ձևանմուշում 3-րդ կանոնի 2-րդ կետի i ենթակետում նշված փոփոխությունները:

3) [Միջազգային բյուրոյի առաջարկությունները] Միջազգային բյուրոն Ասամբլեայի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ՝

- i) 1-ին կետում նշված միջազգային տիպային ձևանմուշների հաստատման,
- ii) 2-րդ կետում նշված՝ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ձևանմուշի փոփոխությունների վերաբերյալ:

Գանտն 21

Միաձայնության պահանջ՝ 14-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն

Հետևյալ կանոնների հաստատումը կամ փոփոխումը պահանջում է միաձայն որոշում.

- i) ցանկացած կանոն՝ 5-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» ենթակետի համաձայն,
- ii) ցանկացած կանոն՝ 6-րդ հոդվածի 1-ին պարբերության iii ենթակետի համաձայն,
- iii) ցանկացած կանոն՝ 6-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն,
- iv) ցանկացած կանոն՝ 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության «ա» կետի iii ենթակետի համաձայն,
- v) 8-րդ կանոնի 1-ին կետի «ա» ենթակետը,
- vi) սույն կանոնը:

Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2013թ. սեպտեմբերի 17-ին